

ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՀՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

Հ Ա Յ Ե Ր (*)

Չեր ելաւո՞ր—Քեզքի գահիճը ցարանակալ ձեզի կը նայի։ Չեր խողխողուած եղբայրներուն արինստ ուր- ուականներով լեցուած իր մթին թաքստոցին մէջ ան իր ոճրագործ ու մարգասպան տապալը կը սրէ ձե- զի՞ դէմ։

Վախը որ անընդհատ զինքը կը պաշարէ՝ զայն ա- ւելի վատ, ու աւելի վայրագ կ'ընէ։

Այդ թագաւոր բորենիէն շնորհք մի՛ ակնկալէք։ Չեր ամբողջական բնաշնչուժը վճռուած է։

Ինչ որ սրբուած է այդ գողահար, մտալլ, մենակեաց ու բռնատըր հոգիին մէջ՝ պիտի գործադրուի։

Անոր ձեռքն էք, իր արինարբու ու վայրագ հրոս- ջերուն ձեռքը։

Ենթադասի զիւանագիտութիւնը՝ շահերու, հաշիւնե- րու եւ կեղծիքի վրայ հիմնուած, ցուրտ ու անայլալ հանդիսատես եղաւ ձեր եղբայրներուն սպանութեանը, ձեր կիկերուն փողոտումին ու բռնաբարձանը, ձեր զիւ- ղերուն հրդեհումին եւ ձեր Հայրենիքին աւերմանը։

Երբ ուր կը հանգայիք, կը հոգեվարկիք Քիւրտերու եաթաղանին տակ՝ զիւանագիտութիւնը՝ ձեր արինուժը սրբուած՝ թոյլ կուտար ու կը պայմանաւորուէր ձեր ա- նարգ կեղեքելին հետ։

(*) Հրձուակեքն ունիւք Հայ ժողովուրդին տալու «Նոր-Կեանք»ի այս քուռով հոյակապ էջ մը Ամիրջար Չիրքիսեանէն, որուն խանդավառ ու տարփոտ անձնուշ- րութիւնը՝ քոչոր ընկձուած ու բռնաբարձու դէմ մարտող ժողովուրդներուն համար՝ ծանօթ ու գրեթէ պատմական է այսօր։

Տարակոյս չունիւք որ Խոտալացի մեծ Յեղափոխա- կանին — որուն ամբողջ կեանքը փառաւոր շարք մը եղած է Ազատութեան համար ոգի ի բոխն մղուած պայ- քարներու — համազումն ու պարտած փորձառութեան քղիտող այս խօսքերը պիտի ցնցեն, քելադրեն ու սրտա- պնդեն՝ մարդը, խորխտ ու եղբայրական հոգիի մը հպումին պէս։

Չի կայ մարդկութիւն ու զգացում հոն, ուր շահը կը տիրապետէ։

Անոնք որ ազգային սեփական յեղափոխական սուրբ մը անհրաժեշտութիւնը զանց ընելով՝ զուտ զիւանագի- տական միջամտութեան մը յոյսը կը շողացնեն ձեր աչ- քին՝ կը խաբեն ձեզի եւ եթէ զայն կը խոստանան՝ կը մատնեն ձեզի։

Ուրեմն պէտք է յանդգնութեամբ, արիութեամբ, դիւ- ցազնութեամբ, մեծ զոհողութիւններով եւ մանաւանդ հզօր ու հանճարեղօրէն սարքուած ու աւելի հանճարեղօրէն գործադրուած ու վարուած ապստամբութիւնով մը բռնա- զատել ժողովուրդներու համակրանքը՝ որոնք՝ իրենց կարգին՝ պիտի կրնան ձեզի ի նպաստ զիւանագիտական միջամտութիւն մը օտիպել։

Հակառակ որ մեզ կառավարողները կը քաջալերեն ետականութիւնը եւ անտարբերութիւնը՝ հանդէպ ամէն մեծ ու ազնիւ բանի, ու հպատակութիւնը՝ ուժին, մոլու- թեան, դրամին, պէտք չէ սակայն յուսահատիլ։

Անկանութիւնը կը կորսուի ու տեղի կուտայ հը- պատակութեան որ վատութիւն կը նշանակէ. բայց կը սիրեն ու կը հիանան ուրիշներու քաջութեան վրայ։

Վատհոգի եւ ստրուկ ժողովուրդ մը արժանի չէ հո- զածութեան։ Արհամարհանքն է իր բաժինը։ Չերինը՝ մինչեւ հիմա մարտիրոսութեան՝ պէտք է ըլլայ զիւցազնա- կան մաքառումներու պատմութիւն մը։

Հարստահարութիւնը չեն կրեր, այլ կը կուրին ա- նոր դէմ։

Ուժին դէմ ուժ հանելը արդարացի ինքնապաշտպա- նութիւն է։

Ողբուկոծը օգուտ չունի, պէտք է հակազդել, գոր- ծել ու զարնել։

Իր ճակատագրին զիտակից ժողովուրդ մը ոչ Աս- տուծմէ եւ ոչ ալ մարդիկներէն օգնութիւն կ'աղերսէ։

Կը միանայ, կը կազմակերպուի, կը զինուի, կը զար- նէ, ու յաղթող կամ պարտուած՝ անմահութեան մէջ պի- տի ապրի։

Ասոր համար զաղափարով մը փաթտուած պէտք է ըլլալ։

Յեղափոխութիւն մը որ զաղափարի մը համար չի կուրի, յեղափոխութիւն չէ, խուճապ մըն է զոր պատ-

մութիւնը կ'արհամարհէ ու չի զիջանիր զայն իր անմահ էջերուն մէջ արձանագրելու:

Անգամ մը որ այն պայթի՝ վա՛յ անոնց որ խոչընդոտ կ'ըլլան անոր եւ կը նկրտին զայն կեցնել, որովհետեւ յեղափոխութիւն մը օր կանգ կ'առնէ՝ իրեն պաշտպաններուն մահաւճիտը կը կնքէ:

Պէտք է ուրեմն միշտ ու միշտ պատրաստ ըլլալ գործողութեան, խելացի, խորհուած ու բանաւոր գործողութեան:

Ժողովուրդի մը կեանքին մէջ կուգայ րոպէ մը, որ ա՛լ պէտք է գործել կամ լինալ:

Այն ատեն պէտք չէ խնայել անգութ թշնամիներուն:

Անգամ մը որ սուրը մերկացուցիք, պատեանը նեւտեցէք եւ շեղը կեանքերնուդ հետ միայն ձգեցէք:

ԱՄԻԼԻՔԱՐ ՉԻՐԻՒԱՆԻ

ԿԱՐՍԻՐ ԱՆՁՐԵԿՆԵՐԷՆ ԵՏՔԸ

Անդրիոյ նախարարութիւնը խորհրդարանին ներկայացուց Թիւրքիոյ գործերուն 1901ի առաջին կապոյտ Գիրքը: Այդ հատորը ազատագրեալ Կրետէի զիւանակապետական պատմութիւնը կը պարունակէ 1899 յունուար 26էն մինչեւ 1900 դեկտեմբեր 24, եւ կամրոջջացնէ 1899ի կրետական կապոյտ Գիրքը:

Բազմաթիւ տարիներէ ի վեր անգլիական դահլիճները թրքական գործերու կապոյտ Գրքերովը լորտերն ու երեսփոխանները եւ անոնց հետ Եւրոպայի ու Ամերիկայի ժողովուրդները պարբերաբար պահ մը կը տեղափոխեն ազետաւոր աշխարհներ. օր մը՝ Հայաստան, օր մը՝ Մակեդոնիա, օր մը՝ Կրետէ, միշտ՝ քրիստոնեայ երկիր մը որ Թիւրքին իշխանութեան ներքեւ է: Թշուառութեան բնագաւառներն են անոնք, որ մտքովը թափառայած քրիստոնեան զարհուրեալ քար կը կտրի: Հողհեւեալ աւերակներէն ծուխը կը մխայ ու կը մխայ, անդադրում կը մխայ. օդը մահաթոյն է, դիզան դիզան զիակնեքու նեխումէն: կիսամեռ վիրաւորեալները իրենց հեծեծանքներովը օտարականին սիրտը կը խշխշեցնեն: Հեղնական ինչ գառն հակադրութիւն գեղաժիծող կեանքի մը հեշտօրօք երազանքներովը հոգին պատրող այդ անուշհնչակ կապոյտին ու անոր ներքեւ պարզուած իրականութեան մթազգեաց տեսարաններու միջեւ:

Հեցնական հակադրութիւնը ա՛լ վերջացած է Կրետէի համար: Երկու կապոյտ Գիրքերը մեզի ի ճեմ կը հանեն Եգիպտեան-Դաշտերու մէջ կարծես: Ձինջ կապոյտ է

Կրետէի երկինքը հիմակ. մաքրենի օդը կը շնչես անոր տակ լիաթոք ու կը հրճուի. սիրա պաղղկեցնող քաղցրասիւզ հովը կը փչէ մեղմաշունչ. աչքերդ զմայլեալ կը պարարին ի տես ծլումի ծաղկումի, վերընձիւղման ետուն զեռուն կեանքին: Յեղափոխութեան յորդաբառ անձրեւները օդը որբեցին, քշեցին աարին դիակները, առողջացուցին վիրաւորեալները, ու վերան աշխարհը շէնցուցին: Եւ ինքնիրմէնդ դուրս ելած, ախնէն յափշտակեալ կը գոչես:

—Օ՛հ կենսանորոգ հրաշագործութիւնը կարմիր անէրեններուն:

Թիւրքիոյ ձեռքէն վերջնապէս փրկուած տարաբաղդ — աւելի ճիշտը՝ նախկին տարաբաղդ — ժողովրդի մը բարաստութեանը երբ հանդիսատես ենք, մենք, իբր մարդ, կ'ուրախանանք. իբր հայ կը զօրանանք մեր քաղաքական Հաւատքին մէջ:

«Պատմութիւնը կը կրկնուի» ըսած են: Պատմութիւնը սակայն Թիւրքիոյ Գրիստոնեայ ժողովուրդներուն համար մէկ անգամ մը չէ որ կը կրկնուի, այլ՝ այնքան անգամ որքան թուով որ քրիստոնեայ ցեղեր կան հինգ դարերէ հետէ թրքական թոպուրցին ներքեւ ձեծուող Նախընթաց օրը Պուլկարիոյ համար կը կրկնուէր Յունաստանի ազատութեան պատմութիւնը. Երկէ՛ Կրետէի համար կրկնուեցաւ Պուլկարիոյ ազատութեան պատմութիւնը: Վա՛ղը: Վա՛ղը՝ կրկնութեան շրջանը Մակեդոնիոյ համար է. վա՛ղը՝ կրկնութեան շրջանը Հայաստանի համար է:

Բայց Յունաստան, բայց Պուլկարիա, բայց Կրետէ եթէ իրենց Ազատութեան պատմութիւններովը «քաջալերացարուք» կը պոռան մեզի, ու դանդաղող ժաւնկերը կը զօրացնեն, միենդոյն րոպէի՛ն խրոխտաձայն կը հրեւալկեն թէ՛ քաղաքականապէս գերեզման դրուած ազգերը, լալիան, կուրծք ձեծող հաւատքով չէ, որ իրենց կափարիչները վեր կը նետեն, ու կը սուրան կը սլանան Համբարձման լեռները, Ազատութեան երկինքը:

Եւրոպական Թիւրքիոյ փրկուած ազգերը իրենք կը սորվեցնեն մեզի քաղաքական Յարութեանց հրաշակերտութիւններու գաղտնիքը: Պարզ է. Համբարձող յարատեւութեան եւ անսպառ անձնուիրութեան միացեալ ուժերուն մէջ կը խտանայ այդ գաղտնիքը:

Ինքզինքը յուսահատութեան հոսանքին տուած, վեպի կարուտի Ովկիանոսը քշուելու ու հոն յափտեանական մահուան հեշտ քունովը հանգչելու համար Կրետացիէն աւելի ո՞ր ժողովուրդ փորձութեան զօրաւոր պատճառներ ունեցած է: Դար մը շարունակ դէնքը — ձեռքէն վար չձգեց. իր հայրենիքը աշխարհագրական մեռաշնորհեալ դիրք մը վայելելու բաղաւորութիւնը ունէր, ու կղզիին մահմետականները իրեն ցեղակիցներն էին, թուով ալ,

փորձաժամանակներն ըր կր կազմէին: Եւ սակայն շարու- նակ զար ըր բրտառնեայ Երոպան իր դիւանագիտական ուսերովը կօփեց, թոպեց իր քաղաքականութեան սալե- րը որպէս զ: Կրետացին օրէ օր աւելի ամրապիւրկ կապ կպուի իր շղթաներուն մէջ:

— Այլ անոր վրայ հոգի չը մնաց. սոկրոնեբր մանրա- խորտակ ջարդուփշուր եղած են, — այս աւետիսով սու- թանին բարեկամները կը շնորհաւորին անոր կոտորածի աննահանջ քաղաքականութիւնը: Ետրունակութեանը համար քաջալերանք կը կարդային: Ետրունակեց:

Ու մկ ընն ալ շղթաները քսկուեցան, լուծուեցան, ինկան, Կրետէ ազատ ր:

Սղոց ըր ունը կրետացին, անով իր շղթաները կը տաչըր ու կը տաչըր. ամէն մկ օղակը մէկիկ մէկիկ կը քակըր:

Սղոցը դաշոյն ըրն էր, շատ զիմացկուն էր անիկայ. կարմիր անձրեին մէջ ջրդուած գէնքն էր: Օր ըր իսկ կրետացին զայն ձեռքէն վար չըր ձգած: Իր գէնքերը Սամփոսնի մագերն կին իրեն համար: Զրկուած անոնցմէ զրկուած կեանքէ:



Իաշոյնն ու հրացանը ալ հիմակ հանգստեան կոչուած են. Անձրեր ալ կարմիր շեղար Կրետէ:

— Հրացանը ալ ինչ պիտի բնեմ, կ'րտը մեր Սֆր- քեացին Անգլիացիներուն, հիմակ որ թիւրքերը պացին ու մեր վրայ Երկրիսը կիսէ:

ԲԱՆՏՈՒԱԾՆԵՐԸ

ՌՈՒՐԻ ԼՈՒՐ ՄԸ ՄԻՋՐԱՆԻՆ...

Ամէն անգամ որ ազատ երկինքներու տաղաւկը ճնշէ թափառական տարադիրի զլխուս վրայ, ամէն ան- գամ որ հոգիս մթննայ Ապահովութեան տմոյն ու միօ- րինակ հարիզոններէն, ամէն անգամ որ վտանգաւորին կարօտը ու եղբրականին թաքուն, այլ խորունկ ու ախ- տաւոր ծարար այրէ ներսիցիս, ամէն անգամ որ շա- րաղէտ ու այլամերձ Երկրին տարօրինակ հայրենաբաղ- ձութիւնն ունենամ Անոնց կ'երթայ մտածումս:

Բանտուածները. ինչ ցաւագին յաճախանք, ինչ խուլ ու հաշածող խղճիխայթ ձանձրացող Հայ Երի- տասարչին համար որ, արտասահմանի դիրին ճակա-

ներուն մէջ, իր անվճար մարթին համարձակութիւնը կը պտտցնէ:

Բանտուածները. փառչիլ շղիջանդներն են անոնք, ու՛ երբեմն աւելի ամեհի՛ պահ մը հեռանալէ վերջ, յան- կարծ անձնաւորութի սխրալի խղճահարութեան մը կամ փորձանքին մոլորեցըն բանուած՝ օտար հոգեբու անտորդու բարօրութեանն խուսփելով Ետ Դ. որ ձողներն ու վտան- գին պաղտուկ ու մահացու դոններէն անարար Ներս Մտնողներն են անոնք:

Բանտուածները. միամիտներն են որ արհամարհեցին պատշաճութիւններ գիրացնող սամիկ խորսմանկութիւնը. Անգիտօյնները՝ որ շուղեցին գիտնալ իրենց անձին շա- հր, իրենց հսկողութի իրաւունքը, որ զուլ ու պարար շնանցան ու իրենց տաժանքին վէթ առեւտեալ հասարական մը շերտեցին, ու հիմա, եղբրական Սպասուցիներն են անոնք որ՝ իրենց աշատուժն աւելի Հայրենիքի ազատու- մին կը սպասեն, ու սիրով պիտի յանձն առնեն յսեր- ժանալ զնոսներու գիւրդին մէջ, եւ ինչ Երեւոյն, Հա- յոն փրկութեան պերադոյն կոչուիր անոնց հոլով սքը- ներուն երտաւեա մսը վնդը...:

Բանտուածները. փոթորիկն առջեւ սոնացողները, տանջանքին մէջ երջանկացողները. Ասկարելիի վեմ յա- մասողներն են անոնք, ու մը քանիչ շրգոնող, յուսալէ շղարդ, հաւատալէ շրտահատող վիժարտի Հսկիներն են անոնք, — խոնարհեցէ՛ք ամէնք ձկ անոնց իրական մտածումն առջեւ...:

Բայց կը խոսանք մեր գանոնք, քիչ մը ամէն որ. կեանքի պայք որին մեր գասն հետապնդուներուն մէջ, կը մտնանք գանոնք, բոլոր սիրուած ու կարած բա- ներուն հետ գորս մեր ետին թողնցինք եւ սրանց վեր- յուշումը, մեր վայելումի, տիրացումի աճապարանքին մէջ, հալիւ երբեմն մորթիքի Կե.ք ըր կը գնէ կուրծ- քերնուս տակ:

Բանտուածները. Օ՛, պէտք էր գուցէ որ այլ սխալը- ուած, ընդմիջուած գոյութիւնները թաղուին շարս պա- տերու անողոք ու ապրեցնող գերեզմանին մ.ջ. որպէս զի կարող բլ սյիք մեք՝ անվախճան գոհարբումներու ջախջախիչ օրինակովը՝ ընդվրումին կենարար խօսքը ր- նել մտաղիստ ու ապերախտ ամբոխներու...:

Ամերիկայի աշխատաւոր Հայերը միայն — որոնք պի- տի կրնան հպարտանալ արտասահմանի Հայութեան է՛ն Հայ մարդ թաղուն — անոնց կը խորհին եղալորուն ու, առեւը մկ մը, իրենց քրտինքին վարձըն բախն ըր կը հանեն անոնց համար: Ապրին անոնք: Ու մեր ունեոր գալութիւններուն լնացած հոգին թող չպղծէ՛ Ապատութեան շաղին մէջ շղթանաւորներուն խրտալ ու լուտ տառա- պանքը:

Բայց բանտուածները նիւթական օրնութեան չեն կարօտիր միայն: Անոնց վէպի զնգանները քալեցին խրն- զումներն, արշալոյսներ փութացնելու կոնք հաւատարմովը,

ու հիմա, հոգեվիճակն զալարումներով, կը սպասեն ամէն վայրկեան, սրտապնդող լուրերու անոնց կողմէ որոնք զուրոր մնացին, բանտին պատերէն շատ հեռու, Յեղափոխութեան անվհատ օգորումներուն հեռաւոր և խորհրդաւոր ճամբաներուն մէջ:

Ասանկ ինկած կտրիճներուն համար չոր հացի պատան ալ բաւական է, եթէ հասնող լուրերը կազդուրիչ ըլլան: Այն ատեն, խոնաւ, զժնէ անկիւնները ուր կ'երկնան անոնք, իրենց գիշերներուն անասելի տաժանքը ապրելու, կը լուսաւորուին իրենց նայուածքներուն յուսովառութենէն, ու անոնք կը սկսին երգել, ժանգոտած շունչերնսն բովանդակ աղիողորմ յամառութեամբը, ու կամաց կամաց իրենց յոգնած կոպիտները կը փակեն, միթիթորդ երազներու բնագոռ շտապելով տենգոտ քուններուն մէջէն... երբ լուրերը աղէկ ըլլան...: Աւաղ որ լուրերը քիչ անգամ աղէկ կ'ըլլան, ու բանտուածները, այն ատեն, որն ի բուն, կեանքն ի բուն կը լռեն, ու, անշարժ, նայուածքնին ղէպի ներս զարձուցած, յամբար իրենց մեծնիլը կը դիտեն: Ո՛չ սրտունջ, ո՛չ անկէճ, ո՛չ ալ օրհնենք կ'ըսէ անոնց շրթունքը... բայց հոգինն... ինչ կ'անցնի անոնց հոգինն մէջ... ու մենէ ո՞վ պիտի կրնար մտածել ասոր, առանց [սղծիխայթէ սարսուղու...:

Այս բանտուածներէն է իմ Միհրանս:



Գպրոցէն կը ճանչնամ զինքը: Գերազանց իմացականութեան մը պչրոտ վայելչութենէն զուրկ, Միհրան օժտուած էր սակայն ուղղամիտ ու խանդավառ նկարագրի մը ամուր ու պարզուկ գեղեցկութեամբը, օրուն առջեւ տեղի կուտային բոլոր շարամիտ ու հեզոտ արամաղուութիւնները իր փայլուն գասրնկերներուն: Մենէ ոմանք, առջի բերան, զայն զուարճութեան ու ծաղրի տաարկայ ընելու կամէութիւններ ունեցան, անոր բիրտ նիտուկացը ու ձախաւեր շարժումները կապկելով, բայց չուշացանք յարգելու զինքը, ամենքս ալ, կարծես զգալով մեր քաշկուտուքի ճիգերուն պատիկութիւնը ու ստորնութիւնը անոր արհամարհոտ հանդարտութեան և ինքնավրստահ կամքին զիմաց: Ու թէև մինչև վերջը ան խնդացուց երբեմն մեզի, բայց անթոյն ու եղբայրական խնդուք մըն էր այդ որուն մէջ գորովը անպակաս եղաւ միշտ:

Օր մըն ալ յանկարծ իմացանք որ բանտ տարեր էին զինքը: Դեռ ան շրջանին էր սւր բանտին գաղափարը արհաւիրող կը լեցնէր Պոլսեցիներուն սիրտը: Շատ մը մեծ ու փոքր նախապաշարութեան ու վատութիւններու հետ, Յեղափոխութիւնը դեռ չէր սրբած Հայուն հոգիէն բանտին զարհուրանքը: Հայը որ բանտ երթալու մտածումին առջեւ կը զգեսնէր, տասը տարի

առաջ, այսօր ա՛լ վարժուած է անոր, ու հազուագիւտ քաղցեանիներէ զատ, որոնք երբեք չպիտի ունենան գոնէ անգամ մը վտանգուած ըլլալու արգարացումը, կրնայ ըսուիլ որ ամբողջ Հայութիւնը բանտերէն անցաւ:

Թունգ ելած, սպասեցինք Միհրանին ազատութիւն: Երբք ամիս վերջը առտու մը զասարանին մէջ իր տեղը գտանք զինքը: Օ՛, մեր յուզումը, մեր ամօթահար փութկոտութիւնը զինքը շրջապատելու, իր ձեռուները սեղմելու, իրեն անձկապին հարցումներ ընելու: Միհրան շատ բան չբօսաւ մեզի: Հասկցանք միայն որ «յեղափոխական» էր մեր բնկերը ու «բոնուէր էր»: Ու այդ օրէն մեր համակրանքին հետ, երկիւղածութեամբ ու պատկասանքով վերաբերուեցանք իրեն:

Միհրան հետզհետէ նուազող ուշադրութեամբ մը կը հետեւէր իր գասերուն: Անիկա հասկցեր էր մեծ ու միակ Գաղափարը ու սորվեր էր անոր ծառայելու վեհազոյն գիտութիւնը: Ալ ինչ փոյթ իրեն բոլոր այդ խափանիչ և ունայն ծանօթութիւնները զոր թիմել կը ջանային ուղեղին մէջ ստրուկ ցեղի մը գաւկըններուն որոնց ըմբոստացումին գեղեցկութիւնը պէտք էր ուսուցանել, ամէն բանէ առաջ, խելայեղ արարքներով:

Ու օր մը նորէն բանտ տարին Միհրանը: Ու այս անգամ սուգի մէջ էին մեր վրդովուած հոգիները: Մենք ալ, մեր կարգին սկսանք երեսի վրայ ձգել մեր գասերը: Միհրանը չէր մի հիմա մեր ճշմարիտ վարձպետը, մեր առաջնորդը, մեր փրկիչը: Անոր ներկայ մտածումին մտիկ ըրինք ու սպասեցինք իրեն տենդոտքէն:

Դուրսը արդէն Խոռվըին հովը սկսեք էր փչել: Պոլսոյ երկինքը կը բեռնաւորուէր, ամէն օր, սպասական ամպերով:

Երբ Միհրան վերադարձաւ այս անգամ, ա՛լ զինքը հանգիստ չձգեցինք: Մենէ շատերը անոր վրին պլլուեցան ու խնդրեցին որ զիրենք ալ «յեղափոխական» ընէ: Օ՛ տեսնելու էր այդ պահուն Միհրանին պատիկ աչքերուն մէջ վատուած երանութեան կայծկտուները: Հիմա, ա՛լ ամբողջապէս կը ճանչնայինք իր անձնութեան ու հաւատքի հսգին, որուն անդիմադրելի ու հեշտահաղորդ տեւապաշտութիւնը ցնցեց ու համոզեց մենէ անոնք իսկ որոնք զգուշաւոր ու սկեպտիկ վերապահութեան ունեցած էին իրեն նկատմամբ:

Բայց վերջնական փոթորիկը վրայ հասաւ ու մեզ ամենքս բաժնեց, մէկ մէկ կողմ քնց տարաւ: Մենէ շատերը արտասահման ինկան: ազատ շունչ առնելու իրենց տարապայման անհամբերութենէն: Միհրան մնաց, նորէն ու միշտ վտանգուելու, նորէն ու միշտ բանտ մընելու ու բանտ վերադառնալու համար:



Անգամ մը օակայն ա՛լ բանտէն չելաւ Միհրան։ Մահուան դատապարտուելէ վերջ, Երևանի Դահլիճին ներմանը արժանացեր էր, ու դեռ նոր բանտէն քանի մը օրէն ի վեր հեռացած, յանդուգն արարքի մը մէջ նետուեր էր, աչքերը հազիւ լոյսին բացած, ու նորէն մուրթին դարձեր էր, ա՛լ զուրս չելլալու համար անկից։

Տարի մը, երկուք անցան։ Միհրան կրցեր էր տուկալ բանտուած կեանքին խժոճութեանը։ Տեսալ մը հանգիստ էր աս իրեն համար որ կոխէն զուրս ապրելուն իմաստը չէր հասկնար։ Ու Միհրան գիտակցութիւնն ունէր արժանապէս ծառայած ըլլալու Յեղափոխութեան որբական խորանին։

Բայց օր մը կօկիծը բոյն զրաւ այդ անվկանդ հոգիին մէջ։ Միհրան իր յեղափոխական անդադարումանձնուրացումին մէջ, ճշմարիտ կուսակցական մը եղած էր — բառին ազնիւ իմաստովը։ Կուսակցական, ինչպէս բոլոր անոնք որոնք կոչուած չեն յամենալու հպարտ ու հմայքոտ մտաւորականութիւններու գեղեցիօրէն ետական տենդերուն մէջ, այլ որոնք սահմանուած են Գործողութեան խստամբեր ու հարկաւոր ճիգերուն, Միհրանի է՛ն մեծ, է՛ն մաքուր, է՛ն տարամերժ հպարտութիւնը եղած էր Հնչակեանի տիտղոսը, ու Հնչակեանութիւնը՝ նուիրական, անձեռնմխելի խորհրդանշանը որ կը զօշակակրէր իրեն համար Հայ Յեղափոխական Գաղափարը։ Առանց ատեցող չկամութեամբ մը թշնամանելու տարբեր կուսակցութիւններու զոյութեան, Միհրան մուշտանդ պաշտում մը ունէր Հնչակեան Մայր-Կուսակցութեան համար։ Հնչակ ու Յեղափոխութիւն բառերը մէ՛կէն ու միասին եկած չէին մի մխուրդ ստրուկ Հայուն հոգիին։ Միհրան, որ քանի անգամներ ատրճանակին ըլծակը զսպած էր Հնչակեանութեան մթին դաւադիրներուն դէմ, նախանձօտ տարփանցով մը կը գուրգուրար անոր վրայ, ու բանտին ներսէն օրտատրոփ կը հետեւէր անոր ալեկոծ ընթացքին։ Յեղափոխութեան սիրուն իր կեանքը կտոր կտոր ըրած ատեն Հնչակեանութեան պատին ունեցեր էր իր աչքին առջեւ։ Հոտ միայն, այդ հաւաքաքան փառաւորումին մասնակցութեանը մէջ փնտոր էր ան իր անձնական զոհացումը, իր անշահախնդիր ջանքերուն վարձատրութիւնը։ Ու հարկաւ տաժանելի պիտի ըլլար Միհրանին շարաշուք ամպ մը տեսնել Հնչակեան հարիզոնին վրայ, որչափ ալ որ վաղանցուկ ըլլար ան։

Աններգաշնակ ու ննջաւոր արձագանք մը լսեր էր օր մը Միհրան։ Ուսկից եկեր էր այդ շար լուրը։ Օ՛, գուժերը շուտ կը հասնին ու զնդանին պատերն ալ կը ծակեն, կ'անցնին անոնք։ Միհրան մահու չափ դառնացաւ, ու ան որ չէր ճանչցած արցունքին միթիթարանքը, զուխը պատին տուած ամբողջ զիշեր մը հեծկտաց։

Ամպը անցաւ հսիկանէն, բայց բարի լուրը ուշացաւ։

Ու ամիս մը վերջը իմացանք օր հիւժախաէն կ'երթար մեր խեղճ ազնիւ Միհրանը։

Հիմա կը սպասէ ան, ամէն օր, նայուածքն ու զուխը միշտ պատին կոթնցուցած, կը հազայ ու կը սպասէ բարերար արձագանքի մը որ չի գար իր արիւնոտ ցաւը թմրեցնել։

Բարի լուր մը Միհրանին...

Կոնգ առէ՛ք, ս'իլ զուք որ հեւ ի հեւ կը շտապէք, անխոչընդոտ ճամբաներէն, ձեր ծառայած ախորձակներուն յագեցումին... բարի լուր մը կուգամ մուրալ ձեռնէ Միհրանին համար...

Չեզի՛ եմ, ս'իլ հեռացողներ, որ Յիշատակին սըրբութեանը մեղանչեցիք, ձեզի՛, ս'իլ գժտուածներ որ ետական ոգորումներու մէջ զիրար կոխկոտեցիք, Ատելութեան գիշերախառն զօրութիւնները երջանկացնելով, ձեզի՛, ս'իլ մոլորածներ որ իտէլին պայծառ բացաստանները լքեցիք ու կուրօրէն մօտեցաք Հեռին ու Ննջուութեան թունաւոր ճահիճներուն...

Բարի լուր մը Միհրանին...

Ինձի մտիկ ըրէ՛ք, ս'իլ ամայացած ու լուռ ու մթածած գողգոթաներու վայրաւատին զակըններ, որ ձեր գոհողութեան ճակատագրին կոնակ զարցուցած, զիրար հալածեցիք ու ահա իրարմէ կը փախչիք...

Բարի լուր մը Միհրանին...

Օ՛ ձեր կուրծքերը թող իրարու փարին ու ձեր դաստակները միահամուռ բարձրանան, գերալոյն ուխտադրութիւններու հոյակապ շարժումին համար, ս'իլ չպսակուած ընդվզումներու փառքին անգիտակից ժառանգորդներ...

Բարի լուր մը Միհրանին...

Ներողութեան, հաշտութեան, խաղաղութեան, եղբայրութեան աղաղակ մը, Յեղափոխութեան թեւերուն տակ խելայեղ գրկընդհանումի մը արձագանքը, մեծ հատնող Միհրանին համար եւ որպէս զի չի գաղրի անյուսալէ, հաւտալէ, ապրել...

Բարի լուր մը Միհրանին...

Բարի լուր մը, գուցէ երթալ, զնդանին պատերուն ետին անոր խաւար հոգեվարքը լուսաւորելու...

Բարի լուր մը... ուրկի՛ց, ուրկի՛ք պիտի հասնի ան Միհրանին... ս'իլ պիտի արժանանայ անոր մեռնող լըթունքներուն գերագոյն օրհնէնքին, անոր փակուող աչքերուն վերջին նուիրագործող արցունքին...

Բարի լուր մը Միհրանին...

ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Պ. տր ֆունդանսոնի ֆրիստուեններ եւ Միւսիւյ- մաններ գրքին վրայ երկու անգամ արդէն խօսելու ա- ութը ունեցանք. այս անգամ ալ նկատողութեան կ'առ- նենք Հայոց վիճակագրութեան նստիւած գլուխը որ նուազ շահեկան չէ քան ուրիշ միւս սութիւնները:

Թիւրք իշխանութիւնը եւ իրեն ձայնակցող բարե- կամները իր յանկերդ մը միտ կը յեղյոցին Հայոց թիւին սակաւութիւնը իրենց հայրենիքին մէջ, որ զկս զի արդեւ յարուցանեն մեր պահանջութիւնը զէմ: Պ. տր ֆունդանսոն ինքն ալ կը յուզէ այդ խնդիրը, բայց ինչ- պէս ուրի: արդարադատ եւ ուղղամիտ եւրոպացիներ, ինք՛ս եւս կը յայտնէ թէ որն է Հայաստանի մէջ բացարձակ կորէն մեծամասնութիւն կազմող ցեղը որ կարինայ տի- բապետութեան մը մենաշնորհը պահանջել: Հայաստան զահոս մըն է, կ'ըսէ, ուր միւսյուն եւ վրա՛ւրսակ մու- ղովորդներ խառնամառն լեցուած են. ո՛չ մէկ ցեղ, ո՛չ մէկ յեղու հոն բացարձակապէս կը տիրապետէ: Կեցող- նական իշխանութիւնը անգոր է հոն իր հրամանները գործադրել տալու: միայն կարողացաւ իր պաշտօնեա- ներուն պատուիրել որ չէզոք կամ բարեացակամ մեան, հանդէպ հարիւր յիսուն հազար հոգիի կոտորածին:

Չանագան հրատարակութիւններ՝ ինչպէս Պ. վիճակ ֆրիստի եւ Պ. Է. հիլե Ռեքլիւսիսը՝ Հայոց ընդհանուր թիւը հետեւեալ կերպով ներկայացուցած են.

Ռսիական թիւրքիոյ մէջ	1,133,779
Եւրոպական թիւրքիոյ մէջ	250,000
Ռուսական Հայաստան,	
Կովկաս եւ Ռուսիա	1,500,000
Պարսկական Հայաստան	150,000
Ռրիշ երկիրներ	60,000
	<hr/>
	3,093,779

Ռրեմս գրեթէ 3 միլիոն: Բայց այս թիւերը նշանադրուած են 1894-96ի ղեկքերէն առաջ: Առաջիկէ հասելու է 300,000 հոգի որոնք ջարդուեցան, անօթութեան կամ հիւանդութեան մեռան, եւ կամ բռնութեամբ իւրաւորուեցան, որով Հայոց ընդհանուր թիւը 2,300,000ի կը հասնի: Մակայն այս թիւը նուազագոյնը կը ներկայացնէ, եթէ հաշուի առ- նուին իւրաքանչիւր շրջան սկի համար հետեւեալ նկա- տողութիւնները:

Պ. տր ֆունդանսոն նախ նկատողութեան կ'առնէ Ա. սիական թիւրքիան:

Ըստ վիճակագրութեան մը գոր Լուսաւորչական Հա- յոց Պատրիարքարանը քանի մը տարի առաջ պատ- րասեց. եւ պատուիրուելու կոտորածներու հազարակո- յից,

Հայոց թիւը կը հասնի 1,250,484ի: Բայց նոյնիսկ Պատրիարքարանին կարծիքովը այդ թիւը իրականութեան չներկայ ցներ, այլ անոր երկու երրորդը միայն: Հար- կերու եւ տարբերու ծանրութիւնը պարտաւորած է մու- ղովորչը իր թիւին մէկ երրորդը զաղտնի պահել. ուրեմն այդ մէկ երրորդն ալ աւելցնելով կը գտնենք որ թիւրքիոյ հայերը 1,875,726ի կը հասնին:

Պատրիարքարանին Հայոց նպատաւոր վիճակա- գրութեան ճշտութիւնը հաստատելու համար Պ. տր ֆունդանսոն նկատողութեան կ'առնէ Երուսաղէմի 50,000 ոսկի պարտքին վճարման առթիւ զինուորական տուր- քին վրայ եղած երեք զահեկանի յաւելումը: Ըստ կա- սաւարական վիճակագրութեան 1882ին զինուորական տուրք վճարով 700000, հայ այր մարդ կը գտնուին. իւրաքանչիւր երեք զահեկան զինուորական տուրք հա- տուցանելով Երուսաղէմի պարտքը երեք տարուան մէջ պիտի վճարուէր: Բայց որովհետեւ հայերը մասամբ կը ծածկեն իրենց թիւը, Պատրիարքարանը առանց զժուա- րութեան այս պաշտօնական թիւին վրայ յիսուն առ- հարիւ յաւելում մը ճշմարտութեան համապատասխան գոտու: Հիսուսաբառ այր մարդ հայոց թիւը 1,005,000 ի կը հասնի, բնականաբար նոյնքան մըն ալ կ'ինքն են, որով ասիական թիւրքիոյ Հայոց թիւը կարելի է 2,100,000 հաշուել, առանց շափազանցու մեան: Պատ- րիարքարանին ցոյց տուած 1,875,726ի վիճակագրու- թիւնը մօտ է ուրեմն: Այս թիւին վրայ սակայն պէտք է աւելցնել եւրոպական թիւրքիա բնակչոյ 280,000 հայերը, որոնց 180,000ը կ. Պոլիս վը գտնուին: Բայց այս թիւերը Լուսաւորչական հայերը կը ներկայացնեն միայն, մինչպէս Կասթիլի Հայոց թիւը 86,613ի կը հասնի, եւ Աւետարանականներունը՝ 88,257ի:

Հիսուսաբար Պ. տր ֆունդանսոն կը հաստատէ թէ օտանեան կայսրութեան մէջ Հայոց թիւը հետեւեալն է.

Ռսիական թիւրքիա	2,050,586
Եւրոպական թիւրքիա	280,000
	<hr/>
	2, 30,586

Չեղջիկ այս թիւէն

իր կոտորեալը սովորաբար, զաղթող, բռնի իւլամացող

կը մնայ 1,930,586

Ըսել է թէ թիւրքիոյ մէջ երկու միլիոն հայ կը զըտ- նուին:

Իսկ ուրիշ Պետութեանց մէջ գտնուող Հայոց թիւն ալ մինչեւ հիմակ հրատարակուածներէն շատ աւելի է: Պ. Ռեքլիւ 840,000ի կը հանէր Ռուսիոյ Հայոց թիւը, մինչպէս նորապիս մարդահամարներէն տեսնուեցաւ թէ 1,500,000 հայ կը գտնուին Ռուսիա: Նոյն Պ. Ռեքլիւ 150,000 հայ կը հաշուէր Պարսկաստան, Մինչպէս 250,000ը աւելի պիտի մտնենայ ճշմարտութեան, ըստ

վերջին ուղեւորներու եւ Հայոց գրաւած հողին կարեւ-
րութեանը :

Վերջապէս, ճշմարիտ է նաև որ մօտ 100,000 մեկ-
նելով Թիւրքիայէն գաղթած են զանազան երկիրներ,
մասնաւորապէս Ամերիկա :

Այս ամէնը նկատուածեան առնելով Պ. տը Գոն-
թանտոն աշխարհիս բոլոր Հայոց թիւը հետեւեալ կեր-
պով կը հաշուէ .

Օսմանեան կայսրութեան մէջ	1,930,586
Ռուս կայսրութեան մէջ	1,500,000
Պարսկաստան	250,000
Զանազան երկիրներ	160,000
	<hr/>
	3,840,586

Հետևաբար ընդհանուր Հայոց թիւը մէկ միլիոն ա-
ւելի է նախապէս ցոյց տրուածէն : Ինչ որ ալ ըլլայ, Հա-
յերը 3,500,000էն աւելի են, եւ ոչ թէ պակաս, ինչ-
պէս որ Հայկական դատին կարևորութիւնը բեկանել տա-
լու հետամուտները ցոյց տալ կուզեն, 2,500,000ի
հասցնելով այդ թիւը :

Հայոց կէսէն աւելին Թիւրքիա կը բնակին, կ'ըսէ
Պ. տը Գոնթանտոն, բնականաբար ասոնք ազգին էն զըժ-
բաղդ մասը կը կազմեն. եւ մերթ սիրաթօժար պիտի
զազթէին թէ որ միջոցները ներէին. բայց Ռուսները
որ էն մօտ զրացիներն են, արդէն վրդովեալ են տես-
նելով այդ խելացի եւ աշխատող ժողովուրդին զարգա-
ցումը, եւ անթիւ արդեւիքներ կը յարուցանեն անոր ազ-
գայնութեան ամրապնդման առջեւ :

Մեզի բարեկամ հեղինակը դիտել կուտայ թէ մենք
հայերս Արևելքի մէջ ամէնէն աւելի շատ զաւակ բե-
րող ժողովուրդն ենք, ու մեր այս բնական տրամադրու-
թեան մեծապէս կը նպաստէ զինուորական ծառայու-
թենէ ազատ մնալու առաւելութիւննիս :

* * *

Բայց այս բոլոր բարեացակամ տեսութիւնները եզ-
րակացութեան մը պէտք է յանդին : Արդարև հայերը
երեքուկէս միլիոն են, ինչ որ պատկառելի թիւ մըն է
Արևելեան ժողովրդի մը համար, բայց այդ միլիոնաւոր
հայերը ո՛ր է կեցողուն մը համախմբուած չեն, ուստի
քաղաքական հաշիւներու մէջ թիւին մեծութիւնը իր կա-
րեւորութիւնը տկարացած կը տեսնէ տարողունումին հա-
մեմատութեամբը : Պուլկար Սրգիսցի, Բուսանացի, Հել-
լեններ մեզի շափ թիւ մը շունենալով հանդերձ, կա-
րող եղան իրենց կեցողունացման շնորհիւ ինքնավարու-
թիւն վայելել : Կեցողունացման խնդիրն է ուրեմն որ պիտի
վճռէ Հայոց ապագան : Բայց Թիւրքիոյ արդի վիճա-
կին մէջ կարելի՞ է Հայոց ստուար մասին ո եւ վայր
մը կեցողունացումը յուսալ : Ո՛չ : Բայց բարենորոգումնե-
րու հարցը կը յուզուի, եւ անոր մէջ փնտռելու է Հայ-

կական խնդիրն շուծումը :

Պ. տը Գոնթանտոնի համոզումն այն է որ եթէ կի-
լիկիոյ Հայաբնակ կեցողուններուն ինքնավարութիւն տրուի,
զէպի ծով ելքով մը, շատ շանցած, այդ ինքնավար
նահանգին մէջ պիտի կազմուի, օգնութեամբ Հայոց
հայրենասիրութեանը, կեցողուն մը ազգայնութեան որ
օժտուած պիտի ըլլայ կենսունակ զօրութեամբ մը ամէն
զխաւոր տարերքներովը, եւ ուր աշխատութիւնը ու տըն-
տեսութիւնը աչքի շատ զարնող հակադրութիւն մը պիտի
յօրինեն օսմանեան մեղիութեան եւ անհոգութեան հետ :

Այս օրուան համար առ այժմ կանգ կ'առնենք այս
տեսութեանց առջեւ, որոնք մեզի անգամ մը եւս կը սըր-
տապնդեն ու կը զօրացնեն : Ինչպէս արդէն ըսինք, Պ.
տը Գոնթանտոն այն լրջամիտ անձնաւորութիւններէն է,
որոնք հայկական հարցը, իբր էական ու կենսական մաս
Արևելեան խնդիրն, հիմնովին ուսումնասիրելու հա-
մար ամէն ինչ պրպտած, քննած են, ու փոքր Ասիան
այցելած : Ամբողջ այդ գիրքը Հայկական դատին ինպաստ
մինչեւ հիմակ երեցած էն ջերմ պաշտպանողականներէն
մէկն է, եւ կը հաւտանք որ մեզի շատ մեծ ծառայու-
թիւն մը մատուցանելու սահմանուած է :

ՏԷԼԻ ՎԱՌՎԱՌ

(ԻՄ ԼԹՈՍՆԵՐԷՍ)

1880ի յունիսի առաւօտներէն մին Սերաստիանտոս.
կալի զօւմի մը տակ արթնցաւ : Հաճի իսկէնը սպան-
ներ էին : Ե՛րբ, ո՛վ, ո՛ւրտեղ, ոչ ոք զիտէր : Հայ հա-
տարակութիւնը ներքին թափէ մը մղուած դուրսը փո-
ղոցներն էր լեցուած : Ամէն մարդ՝ ունքերը պոստած՝
հարցական ձեւ կրող զէմքով մը իրար կը հանդիպէր եւ
ուռերու ցնցումներով կը հեռանար : Խօսմբեր կային որ
զէպի Գայսէրի Գափուսին կը վազէին, ոմանք զէպի Գա-
պազ Եազին, ուրիշներ զէպի Պէզիրճուն արտը, իսկ
շատերը ջղացգութեամբ մը փողոցներուն մէջ կը վիտա-
յին, ոպառնալից շարժումներով, կատղած արտայայ-
տութիւններով եւ զրգոյչ ու կրակոտ խօսքերով : Սննե-
քերիմեան դպրոցի աշակերտները իրենց անկեղծ ազգա-
սիրութեան հաւաստիքը ցոյց տալու համար մէյ մէկ խում-
բի առաջնորդ էին հանդիսացած զանոնք կը խրախուսէին,
հրահրիչ ճառեր, հայրենասիրական երգեր, եւ ժողո-
վուրդի մէջէն յաճախ յուսող սրտամօրմօք հառաչանքներ,

ահա ինչ որ տեղի կունենար Արծրունեաց վերջին ոստանին մէջ:

Թիւրք հասարակութիւնը հայերու այդ սպանալից շարժումէն սարոսափած անապարանքով մը խանութները կղպելով փախած էր: Այդ օրը իշխող տարրը, չը նայելով իր բազմամարդութեան, իր ունեցած հազարումէկ տեսակ տիրապետական արտօնութիւններուն, անըմբռնելի սոսկումով մը կապուած ու կաշկանդուած կը գտնէր ինքզինքը: Ճնշուած ժողովուրդի մը արդար ու մոլեգին զայրոյթն իր դէմ էր ելած, կատաղի ու փրփրած, որ մահուան դէմ կը խիզախէր: Ու Մահէն չը վախցողը Թիւրքէն ալ չի վախնար: Ահա թէ ինչո՞ւ Թիւրք հասարակութիւնը խոհեմ նախազգուշութեամբ մը կ'աշխատէր ժամ առաջ իր տունն հասնել:

* *

Կէս օր էր: Զիւարթներու եւ հետիոտն ժողովուրդի ահաղին բազմութիւն մը Սեբաստիայի հիւսիսային կողմը շտնուող Թարա հայ գիւղէն դէպի քաղաք կուգար: Բազմութեան մէջտեղ կը տեսնուէր գոմէշի նահապետական կառք մը, իսկ կառքին վրայ՝ ցօրենի չոր ցողուններու զէզի մը մէջ պառկած էր հսկայ մարդու մը գիւակը: Գանկը քանի մը մասերու էր բաժնուած, բայց արիննի ամենաթեթեւ նշանն անգամ չէր տեսնուէր, քիչ զարը պարանոցէն կախուած էր մազէ հիւտուած խեղձ մը, որ ետևի կողմէն ծոճրակի մեծ ջիգերը եւ առջեւէն խոշափողը կտրտելով ճվուած ու ծեցծեցուած մտերու փտած խառնուրդի մը մէջ կորսուած եւ ողնաարի սինը զանկին հետ կապող յօդուածներուն էր հասած: Մերկ թևերու կիտովին փտած մօին վրայ փակչած էին լաթի ան կտորները, զոր աւազակները դիակի մերկութիւնը ծածկելու համար միայն թողած էին: Գաշտի մուկները երկու աչքերը փորած էին, ուր կոպիճներու մութ-խոռոչները կը տեսնուէին մահասարուտ արտայայտութեամբ մը: Դիակը ինքնին իր ամբողջութեամբ սարսափ մըն էր, այն մղձաւանջի ուրուականներէն մին, զօր երեւակայութիւնը հազիւ ուրեմն կրնայ ստեղծել:

Կառքի երկու կողմը կերակէին երկու կիներ, ցրուած մազերով, հակառակ արևելեան օւթօրութեան՝ երկուքն ալ առանց եաշմազի էին: Ողբն ու կոճը անոնց ձայնը մարած էր գրեթէ և խուլ ճիչ մը, օրտակակիժ շեշտերով երբեմն երբեմն կը խառնուէր կառքի սոնափայտի միանուագ ճանչիւնին հետ, իսկ ամբոխը կատաղութենէն զոռնար:

— Բէկ Թահիրը տուններնիս արեց, բողոքեցիցից՝ չի լսեցին կը պոռար մին:

— Մէկ ամսուան մէջ ահա հինգերորդ հայու սպանութիւնն է որ տեղի կունենայ, կը զօշէր ուրիշ մը, կառավարութեան հօգն անգամ չէ:

— Գինովութենէն աչքերնին չբացուիր:

— Կաշառքի տոպրակներ են...

— Կախուելու արժանի ոճրագործներ են...

— Բոլորը մէկ Մունտառ Ըրմազի մէջ խղղելու է...

Հազար ու մէկ տեսակ սպանալիքներ ու հայրու թիւններ, որ զայրացած խուժանի կուրծքը կ'ուռեցնէին: Հաւաքական բարկութիւնը օոսկայի հեղեղի մը նման քաղաք կը վազէր: Վայ անոր սր զայն արգիլելու փորձութեան մէջ ինար...

Մինչ այս մինչ այն, Գայսէրի-Գափուտի, Էլյոի Գէօփրի, Ս. Մինաս և Զատայ առաջնորդող ճամբաները դիմող խումբերը բոլորն ալ եկած եւ Պէլլիբճուն արտը խոնուած էին: Ախորձան փառաւոր թաղը գոյութիւն չունէր այդ ժամանակ: Տէրէնտէցի Աչոտցի և Կիւրիսցի վաճառականներու շքեղ տունները չէին բարձրացած եւ օտար տէրութիւններու հիւպատոսարանները հին, աղտոտ թաղերու մէջ կը գտնուէին: Հող-Դար գիւղը, Մխիթար Աբբայի ծննդավայրը՝ տակաւին չէր միացած քաղաքին հետ: Գիւղի հարաւային ծայրը, ճամբուն մօտ աղբիւրը զոյգ մը ծորակներէ իր պաղ ջուրը կը թափէր հոկայ քարէ կուռին մէջ, որուն երկու քույր գիւղի պատաններն ու ծերերը կը նստէին եւ հին օրերու վրայ կը խօսէին, օտարական հետաքրքիր հայերու մատնացոյց կ'ընէին փոքրիկ զօռի վերի լանջին վրայ բարձրացող անշուք գիւղապան տունը, ուր Աբբան ծնած էր և որուն համար գիւղը հպարտ էր, այն պարզ ու չքմեղուկ հըպարտութեամբ, որ աւելի մաքուր ու անաղարտ զգացումներու արտայայտութիւնն ունէր, որով զիւղացին իր գորովն ու գուգուրանքը ցօյց կուտար իր զաւակներէն միայն:

Սգակիր թափօրը եկաւ և Սեւ հողերու գերեզմանոցի պարօպին տակ կանգ առաւ: Պատին կից գտնուող քարերէն մէկուն վրայ բարձրացաւ երիտասարդ մը և ճառ մը կարդաց, այն անպատրաստի եւ սակայն կրակոտ ճառերէն մին, զոր վէպքերն ու հանգամանքները կը ներշնչեն: Անցեալն ու ներկան իրար խառնեց, սև հողերը իրենց ժամանակի օոսկուամբերով պատկերացուց, և ապա յարեց— «Ինչ տարրերութիւն թաթար բռնակալի և մեր ներկայ իշխողներու միջեւ, Լէնկ թիմուր ժողովուրդները ամբողջութեամբ կը սպաննէր, իսկ ասոնք կանգամահատեն, աւելի անխիղճ գործողութիւն մը, որ ժողովրդի միւս անգամները միշտ սոսկումի մէջ պահելու կը ծառայէ: Թողուլ աւազակներուն օր իրենց կամքին համեմատ անպատիժ շարունակեն ահոելի ոճրագործութեան մը շարքը... Անտանելի է հայեր, ամէնուս կեանքը վտանգի տակ է, այսօր Հաճի Իսկէնը, վաղը ուրիշ մը, միւս օր ես ու դու Այս անորոշ ու տանջող պագալին ազատելու ճարը...»

— Ստակին աւազակները պոռաց յանկարծ կիներէն մին, Տէրի վառվառը, և օկսաւ հայրութիւններու շարք

մը: Արևիկեան «համեստ» կինը չէր ալ ան, աչքերը կը փայլէին մութգին կատաղութեամբ մը, այդ ամբողջ բազմութեան ուժը իր մէջը կը զգար, վեց մարդիկ զայն բռնած էին խնդրեցածի տեղ դնելով:

— Ստակածնե՛ր, ստրուկնե՛ր, անպիտաննե՛ր ձեզի նման զաւակներ ծնող մայրերը կով ըլլալու են, մարդն այսքան չի կրնար համբերել:

Կնոջ մը բերնէն մէկը միտին ետեւն թափող նախատինքները ներկաներուն ամբողջին շիղերը ցնցած էին:

Դիակը քառասուն մանկանց զերեզմանատունը պիտի թաղուէր: Շուրջառագարը քահանաներ, ոսկի ու արծաթ խաչերով, հաստ կերտներով եկած էին թաղումը հանդիսատար ընելու և իրենց քսակին համար մեծ ակնկալութիւններ ունէին:

Հագիւ Եստրզըր աղբիւրին ցով հասած, Տէլի վառվառը յաջողեցաւ զինքը բռնող երեսասարգնիւն երկուքը զետին փռել, քանի մը հատին թիթն արիւնել, մէկ ձեռքը հաստ բիր մը, միւսին մէջ իր լաչակը՝ աղբիւրի քարին վրայ նետուեցաւ:

— Ո՛չ չէրքէզին, ո՛չ քիւրտին եւ ո՛չ ալ թիւրքին դէմ գանգատինք Սեբաստացիներ, ճշեց ան, հո՛ն են դուքբըրը, աւագակները, մեր պատուոյն ու ինչքին անիրաւ տիրացողները, հո՛ն, կը լսէք, շեշտեց ան և մատնացոյց ըրաւ Սէրալը:

— Հոն կայ կնամարդի թուրսմորթ փաշա մը, շարունակեց ան, իր խղզուած ձայնին զօրաւոր շեշտ մը տալով, սրիկայ պաշտօնեաներ, զինով ոստիկաններ, ամենքը մէկ բաղդախնդիր անձեր, անազակութիւն ու ոճրագործութիւն սաղրողներ: Նախ գանոնք սեւակեցնենք, անկէ վերջ մեր կեանքին վտանգները ինքնին կը ջնջուին: Արթիթ կը փնտռէք, ահաւասի՛կ, ամենքիս ալ սիրտն այրած է, ամենքս ալ այսօր դստէ բանէ մը վախ չունինք:

— մահէն — թող սարսափին սերայներու ոճրագործները, մարդ ըլլալ զիտնա՛նք, քիչ մը սիրտ, քիչ մըն ալ պատուահնդրութիւն ունենանք: Օ՛ն դէպի Սէրայր... Աստուած մեզի հետ է:

Խոնդրեցածի նման էր վառվառը, արիւնը զրուին էր ցատկած, ամէն անդամ որ ձեռքը վեր կը վերնար կարծես մահու հարուած մը պիտի իջեցնէր առաջին անձին, որ զինքը սրգիլէր, այլ եւս անոր թևերը բռնող, զայն զսպել աշխատող չի կար, ամենքը մէկ մռլեցնած էին, ընդվզումի ահեղ տեսարաններէն առաջինն էր այդ որուն Սեբաստիան երբեք ականատես եղած ըլլար վարերէ ի վեր:

— Դէպի Սէրայ, սոնաց ժողովուրդը ու հազարաւոր փոկորդներ կրկին ու կրկին արտասանեցին ժամերէ ի վեր զսպուած այդ ըմբոստ գայրոյթը: Այդ ձայնէն շուրջառագար քահանաները իսկոյն անհետացան իրենց մոմով ու խունկով, իրենց խաչերով ու աւետարաններով: Ու խուժանին կատղած ու ոճնացող յորձանքը աւելի կը

վազէր քան կը քալէր: Վայրկեանի մը մէջ քանի մը խարխուլ շէնքերու սեմին սրունքը քանդուած էին, կաշմարտն բազուկներ գանոնք գաւազանի տեղ պիտի գործածէին: Մունտառ Ըրմազի նզիրը գանուող բարդի ծառերը իսկոյն մերկացան իրենց ճիւղերէն: Ամենքն ալ, կին ու կրկիմարդ կոխի ծարար կը զգային: Տէլի վառվառը, սպաննուողին ցոյրը, այդ կոխին կեղրոնաձիգ զօրութիւնն էր զարձած. անընդհատ իր բիրը կը ճօճէր և իր կուրծքը տուած դիակիր կառքին յառաջ կը քշէր զայն, իր շարժումները, իր սպանալիքները աւելի պերճ սխտօս էին ալ ևս քան հազարաւոր ճառեր:

Այսօրուան քարէ կամուրջը գոյաթիւն չունէր այդ ատենները, թաղապետութեան ու Աֆիօնեան եղբարց կազմիւնները չէին կառուցուած, այդ սերայ առաջնորդող փողոցը նեղ ու աղտոտ բան մըն էր: Մէջտեղէն սերայի աղբիւրին աւելորդ ջուրը շատ մը տուններու կոյուղիներէն և կոտորած փողոցներէն դուրս խուժող աղբախառն թանձր ցիւխն հետ խառնուած զէպի Մունտառ Ըրմազ կը հոսէր:

Փողոցը նեղ կուգար բազմութեան, ու ամենքը մէկ մոլեգնօրէն դէպի սերայ կը վազէին, հազարաւորները մէկ շարժումով, մէկ քայլով կը յառաջանային, մարդկային մարմիններէ ձուլուած վիթխարի հրէշի մը պէս: Դիակիր կառքը առջևէն կ'երթար, ա՛լ գոմէշներու պէտք չէր մնացած, հարիւրաւոր ձեռքեր զայն կը վարէին և ամենքը միասին կ'երթային ընդհարուելու Սէրային, ուր կը յուսային մեծ թշնամիի մը հանդիպիլ:

Կառքին առջեւէն կ'երթար հիմա Տէլի վառվառը, բերանը փրփրած էր, աչքերը կաս կարմիր կարած, մազերը փոշիով ծածկուած թէքքէներու մէջ «հու» քաշող մոլեռանց «փէվրանէ» տերվիշներուն ածաբ ունէր ան. անընդհատ բիրը օդին մէջ կը շարժէր և խախտոյս կը կարդար: Հոն էր Համբ. Իսիկէնի աշխիւր բաց զլխով, հարսանեկան հինայով ներկուած երկար կրծիք մազերով, որ երբեմն հովի հոսանքէն վեր օդին մէջ բարձրանալով կը ծածանէր Տէլի վառվառին վեր փարտած լաչակին. հետ իր յառաջապահ նախայարձակ դնդի մը նուիրական զրօշակը:

Հակառակ յորձակողներու ջերմ փափաղին Սէրային մէջ մարդ չի կար, ոստիկանապետէն սկսած մինչև սրան պահապանը խոյս էին տուած. զոնքերը փակ ու հաստ նիւրերով կը պուտուէին: Վայրկեանէ մը Սէրային հրապարակը շեցուած էր և ամէն մարդ արդարութիւն ու իրաւունք կը պոսար:

* * *

Մայր Եկեղեցի ասնող ճամբայէն յիսուն վաթսուն հօգիւ բաղկացած խումբ մը հայեր դէպի բազմութիւնը եկան եւ այդ վայնասունի, գոռօցի ու սպանալիքներու

մէջէն առանց դժուարութեան յաջողեցան առաջ անցնել: Ասոնց մէջ կային արեւստն ծերունիներ, ազգեցիկ աղաներ, Պետրոս Եպիսկոպոս Թաւադիզեանն հոն էր, Սեբաստիայի յաւիտենական առաջնորդը, ցածքած դէմքով, ծուած քամակով, մարդկային մորթէ շինուած չոր տոպրակի մը մէջ մեռելի մը կմախքը լեցուցած էին կարծես, այնքան նիհար էր ան:

Քարի մը վրայ բարձրացաւ, քանի մը անգամ հագաց, յետոյ աղաչաւոր դէմքով մը բազմութեան դարձաւ, որ ալ հանդարտած կ'երևար, զայրոյթի ուռած կատաղութիւնը եւ վայնասունը ալ խուլ յանջին մը դարձած էր: Երբեմն միայն ձայն մը կը ժայթքէր, որ փոթորիկի վերջին մնացորդ աշիքներուն պէս կ'անհետանար առանց անմիջական յաջորդի մը: Եպիսկոպոսին երեւնալը այդ աշիքներն ալ լոնցուց առերևոյթ կերպով՝ բազմութիւնը այնքան սպառնալէն ու պոռալէն վերջ՝ քիչ մըն ալ լսելու պէտքը կը զգար կարծես, պաշտպանի մը, ու իր ցաւերուն դարմանի մը անձկագին ակնկալութեամբը:

«Սիրելի զաւակներս, ըսաւ Եպիսկոպոսը, բարկութիւնը իր սահմանը ունի, հասկցա՛ք մը զաւակներս, իմացա՛ք մը զաւակներս, դուք այդ չափը անցած էք, դուք Սերային սպառնալով՝ կառավարութեան սպառնացածեղաք: «Ձայն բազմաց ձայն Աստուծոյ», բայց դուք այդ ձայնը չարաչար գործածեցիք: Իմացա՛ք մը զաւակներս, հասկցա՛ք մը զաւակներս: Վրէժը Աստուծոյ կը վերաբերի, թողէք որ ան գործադրէ, հասկցա՛ք մը զաւակներս, իմացա՛ք մը զաւակներս: Սուր առնողը սուրով պիտի իյնայ, հասկ . . .

Սրբազանը հազիւ իր վերջին պարբերութիւնը լըրացուցած էր, երբ Տէլի Վատվաորը պոռաց.

— Զարկէ՛ք սուտ ճգնաւորին, պապանձեցուցէ՛ք, վրէժ քարոզող առաջնորդ կ'օրգնեք: Եթէ Աստուած ասանկներուն վրէժը առնէր — ցոյց տալով պիտի կը — մինչեւ հիմա թիւրք չէր մնար: Եթէ սուր առնողը սուրով իյնար տաճկական ցեղը աշխարհէն կը ջնջուէր: Սո՛ւր, բի՛ր, մա՛հ, ասով միայն խօսք կը հասկնան մեր պաշտօնեաները . . . մա՛հ մարդասպաններուն . . .

— Սո՛ւր, բի՛ր, մա՛հ, գոռաց բազմութիւնը, առանց ուշադրութիւն դարձնելու իր սրբազանին: Եպիսկոպոսէն աւելի մեծ հոգի մը կար իրենց առջեւ, Վատվաորը, տկար կնիկ մը եւ իր տկարութեան մէջ աւելի ուժ կը զգար ան թիւրքերը խորասկելու քան հարիւրաւոր մարդիկ՝ ժողովուրդին աչքին առջեւ ան դիւցազնուհի մըն էր դարձած քանի մը ժամուան մէջ. հարիւրաւորներու աչքերը անօր վրայ կը յառէին և անոր իւրաքանչիւր շարժումներուն կը հետեւէին:

Սրբազանը ինքզինքը կ'որսնցուցած էր, իր կեանքին մէջ առաջին անգամն էր որ ամբոխի մը ցառումին ականառես կ'ըլլար, առաջին անգամն էր որ իր խօսքը մտիկ չէին ըններ, ծունկերը գինքը չէին կարող կրել, ձեռքերը

կը զոզողաին, դէմքը անձրեւ թրջած չոր ցորենի ցորունի կերպարանք էր օտապեր: Ամէն անգամ որ շուրջը կը նայէր, Վատվաոր բիրն իր աչքին կ'իյնար, օդին մէջ բարձրացած ահեղ գիրքով մը եւ կարծես իր գլխուն էր որ կը սպառնար:

Եպիսկոպոսը եօթանասունէն անց էր այդ ատենները, բայց իր մազին մէջ անկարելի էր ճերմակ մը գտնել, իր մօրուցը կարճ ու ցանցա՞ն՝ աւելի թաթարական դիմագիծ մը կը կրէր քան հայկական: Սեբաստացիները մեծ յարգանք ու համարում ունէին անոր նկատմամբ: Կէս սուրբի պէս բան մը կը համարուէր ան իրենց համար. արդէն ամբողջ Սեբաստիան գիտեր թէ միաժուտ օր կ'անցնէր, տարին քանի մը անգամ հազիւ միօ կ'ուտէր, իր ամբողջ կերակուրը բանջարեղենէ կը բաղկանար:

(Շարունակելի)

ԱԶԱՏ ԽՕՍԲԵՐ

ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ

Այն շփոթ ու անստոյգ շրջանին ուր կը խարխափէ Հայուն ճակատագիրը, երբ զայն վարել յաւակնողներէն ոմանք կուսակցական ամուլ վէճերու ու անձնական ճողճիմ նկատուածներու հրապարակումին կը վատնեն իրենց բոլոր ենթադրական ու ապացուցանելի կարողութիւնները՝ խօսքեր, որոնք շատոնց պէտք էին ըսուած ըլլալ եւ որոնք կարծես կը սպասուին քիչ մը ամէն կողմէ, հարցեր, որոնց ամենօրեայ յեղիեղումը պիտի է՛ն հզօր սատարն ըլլար ազգային վերածննդեան նուիրական գործին՝ լռութեան ու մոռացումի դատապարտուած կը մնան:

Եւ սակայն, ա՛յ ատեն է վերջապէս որ անջատուիք անցեալին այդ դժբաղդ հակումներէն ու ջանանք՝ ունայն աղմուկներէ տարտղնած մեր ուշադրութիւնը ժողովուրդ, կեդրոնացնելու՝ լաւագոյն ապագոյի մը իրականացումին համար կենսական կարեւորութիւն սնեցող խնդիրներու վրայ:

Ու ի՛նչ աւելի էական՝ սուրբ գաղափարի մը յաղթանակին մինչեւ վերջը հետապնդելու սահմանուած ժողովուրդի մը համար՝ քան սրտցալ ու անդադրում մտահագուծիւնը իր երիտասարդութեան բարոյական վիճակին:

* * *

Ինչ եղաւ Հայ երիտասարդութեան դիրքը՝ վերջին տարիներու ազգային տագնապին առջեւ: Գիտցաւ ան օգտուիլ՝ դարերու պատմութեան մէջ մէկհատիկ ու հոյակապ վայրկեանէն՝ իր անմահութեան իշատակարանը տիրաբար լաստակերտելու համար: Արժանի եղաւ փառաւոր դերին գոր ամբողջ ցեղի մը ազատութեան գերագոյն խոյանքը կ'ընձեռել իրեն: Յաջողեցաւ իր անունը արդարացնել և անարգ դատաւրութեան մը պատմական ամօթէն խուսափիլ, վեհերոտ ու անվտանգ անձնութիւններ բերելով գոնէ Յեղափոխութեան ետեւի աննշան կարգերուն մէջ: Ինչ եղաւ իր ընթացքը ճգնաժամուն վաղորդայինն:

Ահա՛ հարցումներ որոնց միտական եւ աննպաստ պատասխանները՝ անդիմադրելի կ'այրեն շրթունքներդ: Եւ կարելի չէ՛ մտածել՝ առանց կատաղութեան եւ առանց կակիծի՝ սերունդներու փառքը խոյոյ այն եղերական, անզանալի, անձեռնունելի Առիթին, գոր Հայ երիտասարդութիւնը կորսնցուց: Աչքերնիդ գոց յիշեցէ՛ք անգամ մը, — ան ինչ վայրկեան էր շքեղօրէն խնդրեալու, ան ինչ օրեր էին մեծնալու, բարձրանալու հրաշանալու... ու Հայ երիտասարդութիւնը խելօքցաւ, պզտիկցաւ, ինկաւ, կորուեցաւ...:

Մեր խօսքը այն կտրիճներուն չէ՛ անշուշտ, որոնք Հայրենի լեռներուն կուշտին բուսած՝ եկան Պոլսոյ փողոցներուն մէջ՝ քաղցրիկ Հայուն անկարեկիր նայուածքին տակ՝ ամենուս համար՝ ճղակտոր ըլլալու: Մեր խօսքը այն սերալի տղաքներուն չէ՛, որոնք իրենց հարազատ արիւնովը մկրտեցին Հայրենի հողը, որպէսզի կարող ըլլայ ան ապագայ դիցազներու անվախ ճան երկունքին: Մեր խօսքը անոնց չէ՛, որոնք ջախջախուած ամենուս կամքովը ստեղծուած ճակատագրի մը մոլեգնութեանը տակ՝ կը շարունակեն իրենց ուսհատակութիւնը, ամէն օր քիչ մը աւելի մոռցուելով իրենց ճողոպրած հեռաւոր եղբայրներէն:

Հայ երիտասարդութիւն ըսելով՝ մենք կը հասկնանք՝ հայկական գլխաւոր կեդրոններ և արտասահման գրասնուօղ՝ քիչ շատ զարգացած առաւել կամ նուազ բարեկեցիկ երիտասարդներու ամբողջութիւնը: Ու ատոնց միայն կ'երթան մեր գիտաղութիւնները:

Առանց վարանելու կրնանք ըսել թէ այդ կարծեցեալ էլիքը չմասնակցեցաւ կոխիլն ու անտարբեր ու վատհոգի մեկուսացումի մը մէջ հանդիսատես միայն եղաւ անոր: Շատեր գտնուեցան անշուշտ որոնք գործելու, շարժելու տարտամ կամէութիւններ ցուցուցին մինչեւ մեծ Փոթորիկին նտխնդօրը, ամբողջ այն վարանսով շրջանին ուր երգերով ու բացազանչութիւններով կարելի էր յանդուօն ու ամեհի երկնալ ստրուկ քաղցեաններու աչքին. բայց վախճանական անխուսափելի վրտանգին առջեւ ամենքը մէկ աներևութացան: Անոնք որ մնացին մաքառումի գետնին վրայ, անոնք որ ինկան ու

անոնք որ բանտերը լեցուեցան՝ աննշան բացառութեամբ գաւառացի զարիպներ էին որոնց մէջ յիսուննոց ծերունիներ ալ չպակսեցան:

Հայ երիտասարդութիւնը իրաւունք չունի պարծենալու այն մէկ քանի անգուգական ղեկներով որոնք՝ ընդվզումի առաքեալներ՝ ստրկական քաղաքներու անձանօթ անկիւններէն դուրս եկան, ազատութեան պատնէշները կանգնելու համար մեր առջին: Անոնք ոչինչ կը սլարտին իրենց ժամանակակից երիտասարդ սերունդին ու՝ բոլոր նախասահմանուած ու անդիմադրելի ուժերուն պէս որոնք ճակատագրօրէն կը շղթայազերծուին օր մը՝ անոնք միտ մինակ գտան իրենց ճամբան ու վրտասահօրէն քալեցին անկից, աչքերնին սեւեռած իտէալին անդիմադրելի հորիզոնները:

Միծաղելի պիտի ըլլար անշուշտ իւրաքանչիւր Հայ երիտասարդի մէջ հերոս մը փնտռելու գաղափարը: Գիտենք որ տրուած չէ՛ ամենուն մահացու խիզախութիւնը հրաշալի կարողութիւնը. բայց գործունէութեան, անձնութեան, զոհողութեան եղանակները անհունապէս այլազան են ու ամենուն մատչելի: Մտածողը որ իմաստուն ու արգաւանդ խօսքը պիտի ընէր, բանաստեղծը որ քնացող ամբողջներուն հողին պիտի ցնցէր, հարուստը որ իր նիւթական գոհհիկ գերազանցութիւնը պիտի քաւէր ինքնարեքաբար ու անխնայ նպաստելով հանրային փրկութեան ճիգերուն՝ նուազ չպիտի արժանանային Հայրենիքի նուիրական խորանին՝ քան յեղափոխական գործիչը որ՝ կեանքը տկաններուն մէջ՝ պիտի յամառէր, քան տէճօրը որ իրաւարար դաշոյնը պիտի մխլէր Մատնութեան կուրծքին, քան ասպատակը որ Հայաստանի սրգաւոր լեռները պիտի մխիթարէր:

* * *

Ինչ է այսօրուան Հայ երիտասարդութիւնը: Չորս գինիդ նայեցէ՛ք քիչ մը:

Օ՛ տխուր տողանցութիւնը: Ահա ուսանողները, Տժգոյն, անիմաստ էակներ, Հասարակ որեւէ ղեկներ: Դպրոց կ'երթան. բան կը սորվին: Կը ժպտին, կ'երեքտկան: Քննութիւն կ'անցընեն: Ո՛չ մէկ խանդավառ ու անկեղծ երեսի, ո՛չ մէկ վեր ու շեշտակի նայող աչքի կը հանդիպես. ո՛չ մէկ կրակոտ, սրտապնդող ձայն կը լսես: Միակ ու տիրական իտէալ մը ունին, — տիրութիւն առնել, գործի մը, զերբի մը տիրանալ, զրամ շահիլ, հանգիստ ապրիլ... դիւրին ու զգլխի՛լ փառասիրութիւն: Այս գրաւիչ հեռապատկերէն հրապուրուած, խանդաղատած է որ Հայ բարեբարը կ'օգնէ ուսանողին: Հայ բարեբարը միայն այն ատեն զրամ կուտայ ուսանողին, երբ ապահովութիւն ունենայ սր ան բժիշկ, երկրաչափ կամ ատաճաբայ մ պիտի ըլլայ օր մը չէ օր մը: Հայ բարեբարը չի հաս-

կընար իմաստասիրութեան, գրականութեան, ընկերային գիտութեանց ուսանողի մը կարելիութիւնը: Փարսա կը բերճն մի այդ բաները: Եւ ուսանողը՝ իր բարերարին արժանի՝ տիրջովը գրպանը՝ կ'երթայ անկիւն մը թխմել իր անօգուտ կեանքը: Ու ա՛լ վայրագ առի՛վիսք մըն է: Բարերարին տեղ գորայ կորսնցուցած է, քսան հոգիի կը քնի: Ամենէն բանմը կը յուսայ Մարդու հետ շարուիր: Ամենուն կը ժպտի: Ու աչքերը չորս գին՝ շահաւոր ամուսնութիւն մը կը փնտռէ: Գէշ աղէկ կնիկ մը կը գտնէ ու կը կարգուի: Ու կը սկսի ծերանալ:

Ահա հարուստի տղաքները, վաղուան «մենծ աղանները: Կը հագուին, կը սքուին, մազերնուն զիծը կը խնամեն: Թատրոն կ'երթան, ֆլորա կ'ընեն պատկառելի դրամօժիտներու հետ: Աժէն բան գիտեն: Արուեստէ ու գրականութենէ կը հասկնան: Վերջին սօմանը չեն փախցըներ միշտ: Մէթէրլինկի ու Ռոտէնի վրայ կարծիք կը յայտնեն ու «աղոր Օթերօ»ին վարտիքներուն ծախուիլը կ'իմացնեն իրարու, ճիշտ (օ՛ որչափ) Բարիգի սեօպնեւրուն պէս: Դսժանօրէն — աւելի գաժանօրէն քան իրենց սոգէտ հայրերը — շահասէր ու կծծի՝ կը գոցեն իրենց հոգին ու զրպանը բոլոր հանրային գաղափարական անթիւններու: Ու այս մանրգէկները գերագանցօրէն անվայելուչ կը գտնեն ազգային գործերու խառնուիլ, լեղափոխութեան (օ՛ շօքիեկ) խոսքն ընել, ու իրենց պորտը գիտելու կը յատկացնեն իրենց պարագ կեանքին պարագ ժամերը:

Ահա մտաւորականները: Այլասէր ձգտումներու անընդունակ, եսական, անգոյն տիպարներ: Իրենց անձական ցաւերը, իրենց յոյսերն ու յուսախաբութիւնները, իրենց սէրերն ու իրենց գիշերներուն թօթուրտուցը կ'երգեն խանդավառօրէն ամբողջ զարնուած ազգի մը սուզին առջեւ:

Տարօրինակ մտայնութիւն մըն է իրենցը: Կարծես խուլ ու անտեղեակ մնացած ըլլային իրենց շուրջը անցած դարձածին, իրենց ազգին, իրենց տունին մէջ բարձրացող անձկութեան ու քայքայումի ձայներուն: Ժպտուն ու թեթեւոտ՝ բնագրօսիկ աշխարհաքաղաքացիութեան մը ջլզիկ հրապոյրին կը ձգտին: Գոցուած, ցամաք, կոնծած հոգիներ՝ որոնք երբեք չպիտի հասնուին մեծ ու շքեղ հաւատքի մը սարսուռովը: Վատուծ ու անարին տիւնթանթիներ՝ որոնք՝ զրեթէ միշտ՝ պերզանց տաղանդի մը կամ գուտ գեղեցկագիտական թանկագին ճիգի մը արդարացումն ալ չունին գտնէ:

Բարոյապէս, ասոնք թերես է՛ն ապականուած տարրը կը կազմեն Հայ երիտասարդութեան: Նենգութիւն ու դաւ, ամէն տեղ, իրարու դէմ: Չեն գտներ երկու անկեւծ բարեկամ, երկու հոգի որ իրարու երես կարենան նայիլ: Իրարու քով կոճքան յաճախ ու իրարու վրայ կը զմայլին, բայց իրարմէ բաժնուելուն պէս՝ կը սկսին զիրար քաշկոտել, զրպարտել, մնառել: Ո՞մանք — է՛ն բռնունելիքները — երբ իրարու հանդիպին կամ երբ տեղ մը

խմբուած ըլլան՝ իւրաքանչիւրը իր մտաւորական գերզանցութեան համոզումին մէջ արբշիո՛ ժամերով զիրար կը հակասեն, անիմաստ խնդրի մը վրայ, զիրար ծիծաղելի ընել կը նկրտին, զիրար փոխադարձաբար ամուսնութեան ու անկարողութեան մասանելով, զիրար բարոյապէս ու մտաւորապէս փճացնելով: Ասոնցմէ չէ որ՝ տխմարութիւնը պիտի ունենայինք՝ սպասելու՝ խանդոտ ու անշահախնդիր աշակցութիւններ ազգային դատին համար: Անոնք որ արդէն պիտի զգան կամաց կամաց ունայն ու անարգու եղբայրակցութիւններու բարեբար նողկանքը, անոնք որ բան մը ունին ընելիք, անոնք որ իտէպի մը ծառայութեան կուզեն նուիրել իրենց ուժերը՝ պիտի անջատուին հետզհետէ այդ փտութեան գանգուածէն:



Ահա առի՛կ Հայ երիտասարդութիւնը, — կորովի, անշահախնդրութեան, անձնուրութեան, համոզումի, նրկարագրի չզոյութիւն: Քաղաքացիական առաքինութիւններու, որ և է ազնիւ տեսլապաշտութեան բացարձակ անընդունակութիւն: Բիրտ անտարբերութիւն մը ու իրենց անձուկ ու անգոյն եսերէն դուրս բան մը շտեմանալու անդամանելի կուրութիւն մը: Վայրագ, տարածերժ ու ուսմիկ անհատաւորութիւն մը: Ահարկու ժրմանքի շրջմտութիւնը: Ու մարդու սո՛վ, մարդո՞ս սո՛վ...

Այն սպասումի ու ակնկալութեան օրերուն, երբ ամէն երկրի երիտասարդութիւնը կը շարժի աւ իր հաւատքին, իր կամքին, իր վեհանձն ու կոյս ուժերուն օժանդակութիւնը կը բերէ մեծ ու պսշտելի գաղափարներու յաղթանակին, երբ թուրքոյի հայրենիքին մտաւորական գաւակները՝ իրենց գործաւոր եղբայրներուն միացած՝ քննաշն ու Սիպերեան կ'արհամարհեն Մտածումին ազատագրութեանը համար, կսկծելի ու սիրտկոտուկ բան մը չէ՛ ստիպուած ըլլալ այս հաստատումները ընելու, անհնարին տառապանքներու տակ մաքառիլ յամառոզցեղի մը երեսնի ի վեր, ցեղի մը որ այնքան պէտք ունի իր երիտասարդութեան արի բազուկներուն, անձնուրաց հոգիին ու ազնիւ ուղեղին:



ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՄՈՎ Կ. ՊՈԼՍԷՆ

Ազգային շրջանակներուն մէջ ոչինչ կայ նշանակելի: Օրմանեան ժողովուրդը քնացնել կ'աշխատի խաբսպատիր երևոթմներով: Պատրիարքարանի գործերէն աւելի՝ ճարտարապետական ձեռնարկներով կը զբաղի ան, ու իր մտահոգութիւններուն մէջ գաւառային կացութիւնը տեղ չբռնէր բնաւ: Կառքը իր տրամադրութեան տակ՝ ու ազգային սնտուկէն 30 ոսկի ժամական կ'երթայ, կուգայ, պարզապէս հսկելու համար Պատրիարքարանի նորոգութիւններուն ու Հիւանդանոցի մատրան վերաշինութեան ծանրակշիռ ու կենսական խնդիրներուն: Ինքզինքը զիւրէ զիւր պատարագի հրաւիրել կուտայ, միամիտներուն հաւատացնելու համար թէ ժողովուրդը շատ կը սիրէ զինքը ու ամէն կերպով գոհ է իրմէ, մինչդեռ ամենքս ալ պժգանք միայն կ'զգանք իր բռնած ընթացքէն:

Յունաց պատրիարքին հրաժարեցուցման պարագաներէն ի վեր, Օրմանեան շատ զգուշութեամբ կը շարժի: Վերջնութեւ խառն ժողովին մէջ եկեղեցականները ըսեր են թէ՛ ինչ պիտի ըլլայ վախճանը այս տխուր վիճակին, թէ մինչեւ ե՞րբ այսպէս անձայն անշուղ պիտի երթանք, եւ գաւառներուն մէջ անդու ու անդազար շարունակուող հարստահարութիւնները լոին պիտի հաստատենք: Ու պահանջեր են թէ պէտք է հրաւիրել ստիպողաբար բոլոր անդամները, վերջնական խորհրդակցութիւն մը կատարելու համար: Իրաւ ալ վերջին շարժումս այդ հրաւերը եղաւ: Հինգ եկեղեցական ու հինգ աշխարհական անդամներ միայն պատասխանեցին: Տատեան երկար ատենէ ի վեր չի գար ժողովքի և այդ նիստին ալ բացակայ էր. նոյնպէս չէին եկած՝ Օրմանեանի աջ բազուկը՝ Ստեփան փաշա, եւ Նորատունկեան:

Եկեղեցականները առաջարկած են որ բոլոր առկախ խնդիրները, տեղական եւ գաւառական, Դրան ներկայացուին պատգամաւորութեամբ մը եւ պատրիարք ու վարչութիւն հրաժարին: Հրաժարական... այս բառը խորթ կը հնչէ Օրմանեանի ականջին: Ինքը և աշխարհականները ընդունած չեն եկեղեցականներուն առաջարկը: Ասոր վրայ եկեղեցականները գոռում գոչումի մէջ կը պնդեն թէ «իրենց չեն կրնար աղբւս պատասխանատուութիւն ստանձնել», հետեւաբար հարկ է որ իրենց տեղ ուրիշներ ընտրել տալու համար հրաման ստացուի կառավարութիւնէն, եւ իրենց պնդմանը վրայ, նոյն օրն

խակ բագրիբը գրուեցաւ ու ղրկուեցաւ: Թաղրիբը կ'ըսէ թէ երկու ժողովները ալ պաշտօն չեն ուզել վարել, հետեւաբար պէտք է որ նոր ընտրութեան հրաման տրուի:

Չենք յուսար որ այս հրամանը տրուի, այլ ինչ որ կը կոահենք, օա է թէ՛ Արթին փաշա՝ առիթն օգտուելով, գործի վրայ պիտի ըլլայ ու քանի մը հարիւր ոսկի շորթելով՝ պաշտօն պիտի ստանձնէ գալ ժողովականները համոզելու սր ետ կենան իրենց որոշումէն, ի հարկին օպանալիք ալ խառնելով իր յորդորներուն մէջ:

Գալով Տէր Ներսէսեանի, իր շորթելները սահման չունին. ինչ ակնյայտնի զեղծութեւր տարագրելոց հաշիւներուն մէջ... Թողունք եկող գացողներէ կամ ոստիկանութեան հետ գործ ունեցողներէ աճուած գումարները...:

«Ես եւ իմիններո», ահա՛ Օրմանեանի նշանաբանը: Տէր Ներսէսեանը չէր բաւեր զեղծութեւր համար հիմա անոր տղաքներն ալ գործի վրայ են. հայրիկներուն կ'օգնեն, Պատրիարքարանի սնտուկը իրենց տրամադրութեան տակ ունենալու համար: Ալ Չօպանեանը զեր մը չունի. Տէր Ներսէսեանի գաւառներն են, որ Պատրիարքարանի թուղթը եւ պիւսօի եւալին գնումները կը կատարեն եւ իրենց ներկայացուցած հաշիւներուն համեմատ՝ զրամ կը ստանան. բաւ է որ պատրիարքը հաստատէ, քանի որ Տնտեսական Խորհուրդ չի կայ մէջտեղը: Այս պզտիկ քօնքօլի միջոցն ալ վերցնել յաջողեցաւ Օրմանեան, վիրաւորելով Տնտեսականի անդամները ուրոնք այլ եւս չեն շարունակել պաշտօնին: Պատրիարքը իր ձեռքն առած է սնտուկին մատակարարութիւնը, իբրև թէ յանձնաժողով մը կազմելով որուն անդամները Ստեփան փաշա եւ Խըտրեան երկու հլու կամաւատարներ և ցնդածներ են...: Եւ ահա Օրմանեան ուզածը կ'աճնէ, կուտայ եւ խեղճ պաշտօնեաններն ալ կը սպասեն ո՞ր ամսական ստանան: Կատարեալ զեղծման կեդրոն մը դարձեր է այլ եւս այդ հաստատութիւնը:

Սոյ խնդիրը չը լուծուեցաւ: Պատրիարքը հասկնալով որ իր ընտրուիւնը հաւանական չէ՝ գործը երեսի վրայ թողած է եւ գայն վերստին ձեռք առնելու համար կ'ուզէ նախ ապահովել իր ընտրութիւնը, աօոր համար է որ Տէր Ներսէսեանը Մերսին ու Երուսաղէմ զրկեց, թապաեանէն՝ դրամական խառնուրդ՝ իր ընտրութեան աշխատելու խօսք աճնել իսկ չէ քաշուեր: Օրմանեանի այս մթին պիտուները պէտք է Կոր վերջ մը գտնեն:

ԿՈՉ ՍԸ ՔԻՒՐՏԵՐՈՒՆ

Քիւրտ Պետրեան փաշայի տղաքներն մին՝ Ապտիւր-
րահման պէջ՝ որ առնէ մը ի վեր «Քիւրտխարան» անու-
նին տակ թերթ մը կը հրատարակէ Եւրոպայի մէջ, կոչ
մը կ'ընէ իր հայրենակիցներուն որուն կարևոր հատ-
ուածները Բրո-Արմենիա՛ն առնելով կը ծանօթացնենք
Նոր Կեանքի ընթերցողներուն:

«Դուք, Քիւրտեր, ինքզինքնիդ անպատուեցիք ու
սուլթան Համիտէն առաջնորդուած ձեր կործանումին
աշխատեցաք, սիրաշահուած շքանշաններով զոր շու-
ներն իսկ չեն զիջանիր ընդունելու: Դուք զոհեցիք հա-
զարաւոր հոգիներ եւ հպատակեցաք աւազակ պետերու:

Սուլթանը յանուն Խալիֆային մեծամեծ վստաշու-
թիւններ և ամենավատ մարգասպանութիւններ կը գոր-
ծէ: Չենէ զատ ամէն մարդ գիտէ ասիկա:

Խալիֆա կամ ինչ կ'ուզէ թող կոչէ ինքզինքը, ասիկա
պատճառ մը չէ սր դուք անարժան պետերու ստրուկները
ըլլաք: Մինչ այնքան պատիկ ազգեր յաջողած են սրտոտ
շանքերով իրենց յատուկ կառավարութիւն մը հաստա-
տել, դուք ուրիշ բան չէք ընել եթէ ոչ զիրար յօշոտել
և այսպէս ազատ ասպարէզ կուտաք սուլթանին բռնա-
կալութեանը: Դուք զոհեցիք անմեղ հայեր ու մինչեւ
իսկ մանուկներ եւ այս կերպով քաղաքակիրթ մարդ-
կութեան առջև դահիճներու տիտղոսին արժանա-
ցաք: Կը վայելէ՞ ձեզի այսպէս խաբուիլ սուլթանին սու-
տերէն:

Այսքան անմեղ հայեր ջարդել՝ ինքզինքնիդ, ձեր հայ-
րենիքը եւ ձեր ընտանեկան յարկերը կործանել ըսել չէ՞,
Վալիները, գայմազաճները որ կողոպուտի զրկեցին ձեզի,
բան մը ձգեցի՞ն ձեզի համար: Անոնք ձեր ձեռքէն չի խլե-
ցի՞ն ձեր ունեցածներն ալ:

Բնական կարիքները ձեզ կը ստիպեն սիրով ապրել
Հայերուն հետ, ինչպէս որ կընէիք հին ժամանակները:
Ապտիւր Համիտէն խաբուելով բարեկամական ամէն կապ
խզեցիք, այս բոլորին հետեւանքը պիտի կրէք այս եւ
հանդերձեալ աշխարհին մէջ:

Բաւական են վայրագութիւններն ու կողոպուտները
որ գործեցիք Ապտիւր Համիտի թելադրութեամբը: Վեր-
ջապէս փառքի եւ երջանկութեան ճամբայ մը բացէ՛ք
ձեզի համար:

Ասոր համար է որ կաշխատիմ ես հոս Քիւրտխարան
անուն թերթիս միջոցաւ, եւ որ մը թերեւս պիտի գամ
ձեր մէջը ձեզի հետ աշխատելու համար:

Նիդակակցեցէք Հայերուն և Աստուած ձեզի հետ
պիտի ըլլայ:»

ԹԻՒՐԳԻՈՅ ԶՈՐՏ ԿՈՂՄԸ

Թիւրքիան աւելի քան երբեք հիմակ է որ կը նմանի
հինցած ապարանքի մը որուն կիսափուլ պատերէն, շախ-
շախ ապակիներէն, խրխլակ դռներէն հօլը ամէն ան-
գամ որ ներս կը խուժէ բան մը նորէն վար կը ձգէ, կը
խորտակէ, կը փշրէ, կը լօսէ ու երբուն շէնքը դէպի
հիմնաքանդ փուլուցւում կը քշէ: «Ի չորից ծագաց» Հա-
յաստանէն ու Մակեդոնիայէն, Ալպանիայէն ու Եւմէնէն
հովերո կը փչեն հին տանը վրայ:

Հայաստանի մթնոլորտին օդաշափը փոթորկի մը
կանխագեկոյց նշանները ցոյց կուտայ, առանց պայթու-
մին ժամանակը որոշապէս յայտնելու: Վստիորեան զի-
տարանէն զարնուած մանրալուր հեռագիր մը ընդհանուր
ուշադրութիւն գրաւեց. «Սուլթանը Բասթամունիի, Տի-
արպէլքիի, Էրզրումի վալիները ետ կանչեց, այդ նա-
հանգներուն կացութիւնը շատ գէշցած ըլլալով»:

Միաբերան հարցում մը պատասխանեց այդ հե-
ռագրին:

— Ինչ, սուլթանին միտքը նոր ինկա՞ն որ այդ նա-
հանգներուն կացութիւնը գէշցած է: Ո՛րակից այդ յան-
կարծական հոգածութիւնը: Ի՞նչ միւս նահանգները. արդ-
եօք անոնք ոսկեպարեան բարեբառութեամբ մը կ'ապրին:

Քաղաքական շրջանակներու մօտէն յարաբերութիւն
ունեցողներ կը փսփսան թէ՛ շինական պատերազմը վեր-
ջացած է, Ասլիխ իր ափրիկեան դժուարութիւններէն ա-
զատուելու վրայ է, Եւրոպա ծանր նոր զբաղում մը
չունի, և Արևելեան հարցը պիտի վերաբացուի: Իբր
նախայարձակում պետութիւններէն սմանք Հայաստանի
վիճակին վրայ գիտողութիւններ ներկայացուցած են
սուլթանին, որ, իրար անցած, կ'ուզէ «բարեացակա-
մութեան» նշաններ ցոյց տալով գործը խզել: Յաջողու-
թիւնը շատ յուսալի չթուիր:

Հայաստանի նկատմամբ լուած ձայները սուլթանը
կը վրդովեն մասնաւորապէս այն պատճառաւ որ Մակե-
դոնիոյ խնդիրն ալ սպառնալից կը յուզուի: Ռուսիոյ պու-
սական զեսպանը Բեդրպուրկէն Պոլիս պիտի վերադառ-
նայ հետը տանելով Մակեդոնիոյ համար բարեկարգու-
թեանց ամբողջակի ծրագիր մը:

Այս լուրը հակասութիւն մը կը թուի Մակեդոնիոյ
նկատմամբ պետութեանց քանի մը ամսէ ի վեր հետեւած
քաղաքականութեան. մանաւանդ որ Ռուսիա հակամա-
կեդոնական խմբին պարտաւ կ'ընթանար: Սակայն ին-
չո՞ւ մոռնալ որ 1882ին մեծ պետութիւնները նախաձեռ-
նութեամբ Անգլիոյ, որուն նախարարապետը էլա ոստոնն
էր, Յունաստանի վրայ ճիշտ այն ճնշումը բանեցուցին
ինչ որ հեմակի ի գործ գրին Պուրկարիոյ վրայ: Ի՞նչ սակայն

այդ միևնույն պետութիւնները Յունաստանի պահանջումներուն պակասում տուին:

Դարձեալ 1897ին պետութիւնները խրատեցին Յունաստանը Հաջա ընթանալ Թիւրքիոյ Հետ. Հելլէն ժողովուրդը չանսաց, բայց չուս զղջաց: Ի փոխարէն այս զղջումին պետութիւնները կրեաւն ազատեցին Թիւրքիայէն, և մօտաւոր ժամանակի մը մէջ Յունաստանի պիտի պարգեւեն զայն:

Միևնույն քաղաքականութիւնն է որ Հիմակ երևան կուգայ Մակեդոնիոյ նկատմամբ Պուլկարիա խելացի գտնուեցաւ և անսաց պետութեան յորդորներուն: Ռուսիա չէր կրնար հակառակելով Մակեդոնիոյ պահանջումներուն սլանները պաղեցնել իրմէն. բայց միւս կողմէն ալ չէր կրնար թողաւորել որ հապճեպ տագնապով մը Մակեդոնիան կ'ա' մ Աւստրիոյ անցնի կ'ա' մ եւրոպական ընդհարումներու տեղի տայ: Թիւրքիոյ քրիստոնեայ նահանգի մը համար բարեկարգութեանց ծրագիր մը երբ Ռուսիոյ հովանաւորութեամբ կը ներկայացուի, անոր ուշ կամ կանուխ գործադրութիւնը անխուսափելի հարկ մըն է Թիւրքիոյ համար:

Գրեթէ նմանօրինակ պայմաններու մէջ էր որ զօրավար Իկնաթիէֆ 1876ին Պուլկարիոյ համար բարեկարգութեանց ծրագիր մը ներկայացուց. հիմակ Զինովիէֆ կը կրկնէ Իկնաթիէֆը. սուլթանը պիտի կրկնէ՞ Միահատը:

Ընդգիծմամբ տութեան յուսահատական փորձը անտարակուսելի է, բայց յետոյ Մէկ երկու ամէն ի վեր շարունակ Պուլէն կը հազորուի թէ Թիւրքիա Մակեդոնիոյ մէջ մեծամեծ պատրաստութիւններ կը տեսնէ « և է պատահականութեան համար, եւ թէ՛ Թիւրքերը որոշած են ահեղօրէն կոուիլ, Մակեդոնիան ձեռքէ չհանելու համար: Այս ամէնը ստոյգ է, բայց այն պարագային համար երբ Մակեդոնական յեղափոխութիւն մը եւ Պալքանեան պետութիւն մը իր դէմը տեսնէր սուլթանը. բայց ի՞նչ պիտի ըսէ երբ Ռուսիա մըն է որ ի գիմաց Եւրոպայի պահանջում մը կ'ընէ. ու այդ պահանջումն ալ Մակեդոնիոյ Թիւրքիայէն անջատու մը չէ — թէ եւ « անջատում » ու « բարեկարգութիւն » գրեթէ հօմանիչ են, բայց « երեւոյթներու փրկութիւնը » աւելի կարեւոր է քաղաքականութեան համար քան թէ իրերու փրկութիւնը: Ո՞րն է այն պետութիւնը որ պիտի համարձակի յայտարարել թէ « եւ է բարեկարգութեան պէտք չկայ Մակեդոնիոյ համար: Գերմանիան: Բայց կրեաւի խնդրին մէջ տեսնուեցաւ Գերմանիոյ կողմէն սուլթանին մատուցուած ծառայութիւնը: Վիլհելմ կայսրը իր չէզոքութեամբը հաստատեց Թիւրքիոյ համար իր բարեկամութիւնը, բայց կրեաւն գնաց: Նոյնը կարելի է, առանց խարսելու, գոռչակել նաեւ Մակեդոնիոյ համար ալ:

Սուլթանը վերջերս փորձով անգամ մը եւս տեսաւ

թէ անօգուտ է Գերմանիոյ վրայ յոյս գնել երբ « եւ է թրքական խնդրի համար պետութիւնները միաբերան են իրենք իրենց մէջ: Օտար թղթատուններու խնդիրը որ սուլթանին դիւանագիտական ահեղ պարտութեամբը վերջացաւ, կը սորվեցնէ թէ պետութեանց համաձայնութեան պարագային Գերմանիա ձեռքերը լուալէ գաւ ուրիշ ծառայութիւն չկրնար մատուցանել Թիւրքիոյ. նոյն իսկ այս ծառայութիւնն ալ, զրականապէս սուղի կը նստի Թիւրքիոյ:

Երբ մայիս 5ին սուլթանը օտար թղթատուններու պայուսակները գրաւել տուաւ, եւ համարձակեցաւ յայտարարել թէ իր պետութեանը մէջ ալլ եւս ջնջուած են օտար թղթատունները, շատ հաւանական է որ նախապէս Գերմանիայէն յուսադրական խոստումներ օտացած ըլլայ: Բայց ահա ճգնաժամին, երբ պետութիւնները սուլթանին վերջնագիր մը տալով իրենց նաւատորմները Վոսփոր մտցնելու կը պատրաստուէին, Վիլհելմ կայսրը սուլթանին հաղորդեց թէ փրկութեան միակ միջոցն էր խոնարհիլ պետութեանց պահանջումին առջև, և ահա արտաքին գործերու նախարար Թէֆիզ փաշա զեսպանատունները երթալով խոնարհաբար ներողութիւն խնդրեց մայիս 5ի « օխալումին » համար, և յայտարարեց թէ օտար թղթատունները իրենց առանձնաշնորհեալ իրաւունքները կրնան լիովին վայելել:

Սուլթանը ոչ միայն բան մը չհաւեցաւ, ոչ միայն խայտառակուեցաւ, ալլ եւ բաւական բան մըն ալ վրայ տուաւ. Հայտար փաշայի նաւահանգստին շինութեան մենաշնորհը Գերման ընկերութեան տուաւ վերջնապէս ու նաև վաւերացուց շահագործման կանոնագիրը որուն տրամադրութեանցը կը հակառակէին նախարարները, իբր Թիւրքիոյ շահերուն աննպաստ թղթատուններու գործին մէջ սուլթանը երբ նեղը մնաց, Վիլհելմին որկորը նետեց այդ խոշոր ոսկորները զորս վերապահած էր Հայաստանի եւ Մակեդոնիոյ դժուարութեանց համար: Վիլհելմ անգամ մը որ այդ ոսկորները իր ախաններուն ներքեւ առաւ, իր բարեկամին մոլտաց թէ՛ բան մը չկրնար ընել, զիտուն ճարը թող նայի: Եւ ահա Թէֆիզի զղջումի և ապաշուուծի այցելութիւնները տեղի պնեցան:

Ահա վերջին նորութիւն մըն ալ: Գաւառական գործերու նախարարը սուլթանին հրամանաւ, զատարաններուն իմացուցած է թէ Եւրոպա քրէնք արտադրութեան տարանները, տեղացի թէ օտարազգի, ալլ եւս պիտի չը կրնան դատաւարել Թիւրքիոյ մէջ մինչեւ որ « Պուլոս » իրաւագիտական վարժարանին մէջ քննութիւն անցնելով վկայական ստանան:

Բազմաթիւ են այն օտարազգի փաստարանները որոնք շատ տարիներէ ի վեր Պուլիս, Իզմիր և ուրիշ կարևոր

տեղումը հաստատուած են: Առնիք եղեմնագատ աս-
եաններու առջեւ շեն կարող գատավարել, այլ՝ առե-
տրական գատարաններու առջեւ Վիսյն կրնան փանտու-
բանել: Իրաւա յիտուածան վարժարանին մէջ քննութիւն
անցընելով վարչական ստանալու գրութիւնք եթէ ընդուն-
ուի. աժնքն ալ պիտի կործանին: Քսնի մը փորձ հղած
է: Այս կարգի փաստաբաններէն ոմանք անմիջապէս ի
րաւագիտական վարժարանը զիմելով քննութիւն անցընել
ուզեր են, բայց մէկ մէկ պատրուակով իրեն «անյաջող-
ներ» վկայական շեն կրցած սասանալ:

Սուլթանին նպատակն է Եւրոպացիներուն ոտքը
կտրել թիւրք գատարաններէն. միանգամայն հաճելի ըլ-
լալ թիւրք փաստաբաններուն, որոնց թիւը աճած է,
բայց շատ պարապը կը մնան: Եւրոպացի փաստա-
բաններու չկողբացմամբ թիւրքերուն գործ կը բացուի:

Հիմակ օտարագոյիները անճրկած, շուարած շեն գե-
տեր ինչ ընելնին: Հարիւրի շափ Եւրոպացի փաստա-
բաններ գումարում մը ընելով որոշեր են զեօզաններուն
զիմել և անոնց միջամտութիւնը խնդրել: Այս միջամտու-
թեան պէտքը զգալի է մանաւանդ այն պատճառաւ որ
թիւրքի մէջ գտնուող օտարները երբ թիւրքահպատակ-
ներու հետ առեւտրական դատ ունենան, ձեռնհաս
ատենար խառն դատարանն է, որ Առաջին Սենեակ կը
կոչուի: Ինչ պիտի ընեն այդ օտարազինները երբ իրենց
դատերը թիւրք փաստաբաններու յանձնել հարկադրուին:

Այս նոր խնդիրը շատ հետաքրքրական է, սակայն
հաւանական չլծուիր որ զեօզանները շուտով միաբանին
ու կտրուկ միջոցներու զիմեն, ինչպէս ըրին թղթատա-
րական խնդրին մէջ:

Ինչ որ ալ ըլլայ, մենք ուրախ ենք որ սուլթանը միշտ
Եւրոպացիներուն զժգոհութեան նորանոր առիթներ կը
հայթայթէ: — Ինչ մըն ալ համը թող անոնք առնեն:
Շատ բան կը սորվին:

ԼՈՒՐԵՐ

ՍՈՒԼԹԱՆԻՆ ԲԱՐԵԿԱՄԸ. — Լոնտոնի սենակո-
րեանց ատեանը այս օրերս զբաղեցաւ Սըր Ալմեր
Պարրիքի գործովը: Անգլիացի պաշտակողական նախա-
րարը 40,000 ոսկիի պարտքով մը կը սենականայ: Սա-
կարանի խաղեր, «իւնկլենտ» բերրիւն եւ քաղաքական
գործերու համար ծախսեր այս դժբաղդոտքեան պատճառ
եղած են: — Ինչեւէ, բշեամի մը պակաս կոռնեանք
Եւրոպայի մէջ:

Սըր Ալմեր Պարրիք, այն քրքամոյ երեսփոխանն
է որ Պոլիս Հայոց բերնիւն մէջ «Պարրըլըր Անտո» կը
կոչուէր 1894-95ին, այն սենակառոտքեան է որ յատ-
կապէս Սասունի կոտորածներուն ատեն սուրբանիւն
փաստաբանը եղաւ Խորհրդարանիւն մէջ: Չանց սոսա

հաւեղ. անգլիական մամուլին հրատմարակոտքեաները:
Միշտ Թիւրքիոյ պաշտպանը կը հանդիսանար եւ կը
հեղինակներ քրիստոնէից: Բանիցս Պոլիս գացած է.
պոչրանիւն ներկայացած է եւ մեկուշտոյններ ստացած.
— սենտրալոյս պատշիշներ տար Բայց այդ ամենը զիւրը
չիւրկեցիւ. եւ այժմու իսլամոտոնիկոտքեանը ցոյց կոռտույ
րէ ինչ աւտօրայի շարժատիւրներու պետք է վերագրել
Պարրիքի քրքասիրոտքեանը:

Իր պատիժը գոտու: Ու կարգաւ ամէնքն ալ: Վիշ-
հելմ անգամ մը վիրաւորուեցաւ. Լօպանօֆ չարամահ
սատկեցաւ: Ումպերօ երբ իր զաւակը կը դրկեր Մեծ-
Մարդասպանիւն ձեռքը համբոտքեանը, ստղիւն ալ պգտիկ
մարդասպան մը Ումպերոյի սիրտը կը հաւրոտքեր դա-
շոյնովը: Իսկ Մեծ-Մարդասպանը ողջ կը մնայ որպէս
գի իր աւքովը տեսնէ ընդ քրիստոնէից ազատոտքեանը

ԵՒՄԵՆ. — Եւրոպական քերթերուն կը հաղորդուի թէ
Եհմեկցիները 100,000 եւրոպական հրացան ունեն,
րէիւ այդպիսի զենքերու վաճառուը արգիւտած ըլլայ
իրենց երկրիւն մէջ: Այս պատահանքեանը անեղապէս
վտակառոտքեանի թիւրքիոյ համար:

ՏՈՒԳԱՆԲ. — Սուրբանը Պոլիս Գրանսայի դեսպա-
նատան 10,000 ոսկի վճարեց ի հաշիւ հայկական կո-
տորածներին Գրանսայցիներուն կրած վնասներուն: Եւն-
կապէս 60,000 ոսկիի մօտ գրքումը մըն ալ անգլիական
դեսպանատան պիտի վճարուի այդ հաշուէն:

ՕՏՐԱՀՊԱՏԱԿ ՀՂՅԵՐԸ. — Սուրբանը իրատեով
մը արգիւտք սուս եւ ամերիկեան հպատակոտքեաները
ընդունող Հայոց Թիւրքիա մուտքը: Էրոտ պետու-
րիւնները այս որոշումը ընդունեցիւ եւ իստիւր րի-
դորեցիւ:

ՆՈՐ ՇԱՍՑԷ

«ՆՈՐ ԿԵԱՆԲ»-ի վերաբերեալ նամակ ո՛ր Բենիին
զրկել հեանեալ հասցէին:

REDACTION DU "NOR-GUJANK"
27, BATHURST GARDENS,
KENSAL RISE,
(ENGLAND) LONDON, W

ՆՈՐ ԿԵԱՆԲԷ կը հրատարակուի ամէն ամսու 1 ին-
եւ 15ին: Բաժնեզինն է Եւրոպայի համար ամբիկան 10
եւ վեցամսեայ 5 ֆրանք, Ամբիկայի համար ամբիկան 2
ու վեցամսեայ 1 ամբար:

ԱՅԴ

Տպարանական փոփոխոտքեան պատճառաւ «ՆՈՐ-
ԿԵԱՆԲ»-ի ներկայ թիւը ուղացաւ: